ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2017 թ.
հուլիսի 6-ի նիստի N 29
արձանագրային որոշման

Ռ Ա Զ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Գավառ 2017թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունները, տնտեսական միջավայրի ու հասարակական կյանքի տարբեր բնագավառներում առկա իրողությունների համակողմանի վերլուծությունները հստակ ուրվագծվում և ներկայացվում են 2017-2025 թվականներին զարգացման ռազմավարության մեջ, որը կխթանի մարզային ենթակառուցվածքների բնականոն գործունեությանը, մարզի համայնքների շարունակական և համաչափ զարգացմանը ու ազգաբնակչության կենսապայմանների բարելավմանը: Մարզի 2017-2025 թվականների ռազմավարությունը կազմվել է Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների զարգացման ռազմավարության մեթոդաբանության հիման վրա, որը հաստատվել էր Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի N29 արձանագրային որոշմամբ: Ակնկալում ենք, որ մարզի 2017-2025 թվականներին զարգացման ռազմավարությունը կնպաստի ՀՀ Գեղարքունիքի մարզի 92 համայնքների կողմից ներկայացված առաջնահերթությունների ու մարտահրավերների արդյունավետ լուծմանը և նմանատիպ ռազմավարությունների իրականացման շնորհիվ ՀՀ Գեղարքունիքի մարզն աստիճանաբար կդառնա Հայաստանի զարգացած և մրցունակ տնտեսություն ունեցող տարածքներից մեկը:

ՀՀ Գեղարքունիքի մարզը ունի զարգացման ուրույն հեռանկարներ, որոնց դիտարկումներն էլ հանդիսացել են աշխատանքային խմբի և այս գործընթացին իրենց մասնակցությունն ունեցած բոլոր պետական, հասարակական, փորձագիտական կազմակերպությունների ու անհատների աշխատանքի կազմակերպման հիմնական ուղենիշն ու ելակետը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականներին զարգացման ռազմավարությունն ամբողջությամբ մաս է կազմում մեր երկրում ընթացող բարեփոխումների տրամաբանությանը, ՀՀ Նախագահի ու կառավարության՝ մարզերում դրական զարգացումներ ապահովելու ծրագրային մոտեցումներին և դիրքորոշումներին, ինչպես նաև ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության և խնդրի հետ կապված այլ կարևորագույն փաստաթղթերի հիմնական դրույթներն ու գերակայությունները:

Այս ամենի արդյունքում վստահաբար կարող ենք ընդգծել, որ մարզի ռազմավարությունը լիարժեքորեն կնպաստի տարբեր բնագավառների շարունակական զարգացմանը, ինքնատիպ դերակատարում կունենա մարզի 92 համայնքների գերակա խնդիրների լուծման ու հետագա առաջընթացի ասպարեզներում, կհանդիսանա մարզի տարեգրության առանցքային էջերից մեկը և կդառնա առօրյա աշխատանքի բացառիկ ուղեցույցն ու կողմնորոշիչը:

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետ **Կ. Բոթոյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 5
Աղյուսակների ցանկ 6
Գծապատկերների ցանկ 7
Հապավումներ 8
I. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ 9
II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 11
III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 12
3.1 ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 12
3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ 14
3.3 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 17
3.4. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 20
3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 23
3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 25
3.7 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ 27
3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ 31
3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ,ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ 33
3.10.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ 34
3.11.ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 37
3.12.ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 41
3.13.ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ 44
IV.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT) 46
V.ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 50
5.1 ՏԵՍԼԱԿԱՆ 50
5.2 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 50
5.3. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ 52
VI.ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 54
VII.ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 59
VIII. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ 62
IX.ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 64
X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 67

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ՄԱՐԶԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԸ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ (2016Թ.) 12
ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 2012 և 2016 01/01 ԴՐՈՒԹՅԱՄԲ .. 14
ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2011-2015ԹԹ. 16
ԱՂՅՈՒՍԱԿ 4. ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ և ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, 2015Թ. . 22
ԱՂՅՈՒՍԱԿ 5. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ, ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ 22
ԱՂՅՈՒՍԱԿ 6. ՄԱՐԶՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ 23
ԱՂՅՈՒՍԱԿ 7. ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ 26
ԱՂՅՈՒՍԱԿ 8. ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ 2011-2015ԹԹ. 26
ԱՂՅՈՒՍԱԿ 9. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԶԲԱՂՎԱԾՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 26
ԱՂՅՈՒՍԱԿ 10. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 2015Թ. 27
ԱՂՅՈՒՍԱԿ 11. ՏՆՏԵՍԱՊԵՍ ԱԿՏԻՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԸ 27
ԱՂՅՈՒՍԱԿ 12. ԱԿՏԻՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ 28
ԱՂՅՈՒՍԱԿ 13. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ 28
ԱՂՅՈՒՍԱԿ 14. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ 28
ԱՂՅՈՒՍԱԿ 15. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ԸՍՏ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ 2011-2014ԹԹ 29
ԱՂՅՈՒՍԱԿ 16. ԱՇԽԱՏՈՒԺԻ ԱՌԱՋԱՐԿԸ ԸՍՏ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ և ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ, 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 30
ԱՂՅՈՒՍԱԿ 17. ՄԵԿ ԲՆԱԿՉԻ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 2016. ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ 35
ԱՂՅՈՒՍԱԿ 18. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 2016Թ. 42
ԱՂՅՈՒՍԱԿ 19. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԸ 2016Թ. 42
ԱՂՅՈՒՍԱԿ 20. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015-2016ԹԹ. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 43
ԱՂՅՈՒՍԱԿ 21. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2017-2025ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՎՏԱՆԳՆԵՐԸ 46
ԱՂՅՈՒՍԱԿ 22. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ և ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 50
ԱՂՅՈՒՍԱԿ 23. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 54
ԱՂՅՈՒՍԱԿ 24. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 59
ԱՂՅՈՒՍԱԿ 25. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԶՌ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ և ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 64

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԹՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2011 – 2015ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԵՄԱՏԱԾ ՀՀ-Ն և ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏ 15
ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԻՆԳ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ(ՄԱՐԴ/1ԿՄ^2) 2011-2015ԹԹ. 16
ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ և ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ և ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ 16
ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԵՌՆԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԸ ՀՀ, ԼՈՌՈՒ և ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏ 21
ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՈՒՂԱՌՈՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԸ ՀՀ ԼՈՌՈՒ և ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏ 21
ԳԾԱՊԱՏԿԵՐ 6. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ՀՆԱ-Ն՝ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՀՀ-Ն և ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԻՋԻՆԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ, 2011–2015ԹԹ. 25
ԳԾԱՊԱՏԿԵՐ 7. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ..... 25
ԳԾԱՊԱՏԿԵՐ 8. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ՀԱՄԵՄԱՏԱԾ ՀՀ-Ն և ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԻՋԻՆԻ ՀԵՏ, 2012–2015ԹԹ. 26
ԳԾԱՊԱՏԿԵՐ 9. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ՑԵՆԶԻ.....28
ԳԾԱՊԱՏԿԵՐ 10. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ.....29
ԳԾԱՊԱՏԿԵՐ 11. ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԿԱՆԱՆՑ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ 30
ԳԾԱՊԱՏԿԵՐ 12. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՈՐԾՈՂ 2 ԲՈՒՀ-ԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 2011-2015ԹԹ. 33
ԳԾԱՊԱՏԿԵՐ 13. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԿԱ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ.....34
ԳԾԱՊԱՏԿԵՐ 14. 2011-2015ԹԹ. ԼԻՃ ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ՄԱՆՐԱՁՈՒԿ.....39
ԳԾԱՊԱՏԿԵՐ 15. ՁԿՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ (ՀԱՁԱՐ ՀԱՏ) 39

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԶՌ	Զարգացման ռազմավարություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան
ՀԶՀ	Համայնքային զարգացման հիմնադրամ
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿՏՀ	Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՀՎԷԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՏԶ	Տարածքային զարգացում
ՆՈՒՀ	Նախադպրոցական ուսումնական հաստատություն
ՏԶԳԾ	Տարածքային զարգացման գործառնական ծրագիր
ՏԶԳՊ	Տարածքային զարգացման գործողությունների պլան
ՏԶՀ	Տարածքային զարգացման հիմնադրամ / Տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմ
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏՀՏ	Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՈՒԹԿՀՎ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ
ՓՄՁ-ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՍԹԿ	Սահմանված թույլատրելի կոնցետրացիա
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվության ընկերություն
ԿՄԿ	Կեղտաջրերի մաքրման կայան
ՍԱՏԳ	Սոցիալական ապահովության տարածքային գործակալություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ

Ի. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) ճանաչել է տարածքային զարգացման կարևորությունը և այս ուղղությամբ շարունակական երկխոսություն է վարել ԵՄ-ի հետ՝ 2000թ.-ից սկսած: 2003թ.-ից սկսած՝ տնտեսական զարգացումն ու աշխատատեղերի ստեղծումն առաջնահերթ են համարվել մի շարք գերակա փաստաթղթերով, օրինակ՝ ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի <<Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> թիվ 994-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի <<Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> N 1207-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> N 442-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշմամբ:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունները, տնտեսական միջավայրի ու հասարակական կյանքի տարբեր բնագավառներում առկա իրողությունների համակողմանի վերլուծությունները հստակ ուրվագծվում և ներկայացվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության ուղղություններում, որոնք կխթանեն մարզային ենթակառուցվածքների բնականոն գործունեությունը, մարզի համայնքների շարունակական և համաչափ զարգացումն ու ազգաբնակչության կենսապայմանների բարելավումը:

3. ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարությունը կնպաստի ՀՀ Գեղարքունիքի մարզի 92 համայնքների կողմից ներկայացված առաջնահերթությունների ու մարտահրավերների արդյունավետ լուծմանը և նմանատիպ ռազմավարությունների իրականացման շնորհիվ ՀՀ Գեղարքունիքի մարզն աստիճանաբար կդառնա Հայաստանի զարգացած և մրցունակ տնտեսություն ունեցող տարածքներից մեկը:

4. ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարությունն ամբողջությամբ մաս է կազմում մեր երկրում ընթացող բարեփոխումների տրամաբանությանը, ՀՀ Նախագահի ու կառավարության՝ մարզերում դրական զարգացումներ ապահովելու ծրագրային մոտեցումներին և դիրքորոշումներին, ինչպես նաև ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության և խնդրի հետ կապված այլ կարևորագույն փաստաթղթերի հիմնական դրույթներն ու գերակայությունները:

5. ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարության գործընթացի հիմնական նպատակն է պետական ոլորտային ռազմավարությունների իրականացմանն աջակցելը, որն անդրադառնում է մարզի մի շարք համընդհանուր հիմնախնդիրների, ինչպիսիք են մարզի շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականությունը, մասնավորապես՝ բնական ռեսուրսների օգտագործման ու բնապահպանական անվտանգության բնագավառներում:

6. ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարությունը մի գործիք է, որը հանդիսանում է զարգացման իրական շարժիչ ուժ, և ստանձնում է մարզի զարգացման պլանավորման և իրագործման արդյունավետ ու թափանցիկ համակարգի գործունեության պատասխանատվությունը:

7. ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարության նպատակները համընկնում են Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարության հիմնական գերակայություններին՝ մարզում

զբաղվածության ընդլայնում, մարդկային կապիտալի զարգացում, սոցիալական ապահովության համակարգի բարելավում և պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացում:

8. ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարությունը քաղաքականության տեսանկյունից հիմնական մարտահրավերներից է տարածքային զարգացման համակողմանի ռազմավարության մշակման ու իրականացման գործընթացում, ինչպես նաև այն արտացոլում է հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են մարզերի մրցունակությունը բարձրացնելու և նրանց միջև առկա անհամաչափությունները մեղմելու համար:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

9. ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության նպատակները և գերակայություններ հիմնականում ուղղված են իրավիճակի և քաղաքականությունների վերլուծության արդյունքում վերհանված հիմնախնդիրների լուծմանն՝ ապահովելով նպատակահեն կառավարման համակարգ:

10. ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարության հիմնական նպատակն է իրագործել զարգացման ոլորտների համապատասխան դերակատարների հետ սերտ համագործակցություն, ծրագրային բաղադրիչների և ֆինանսական հատկացումների միջոցով՝ հաշվի առնելով զարգացման մակարդակը: Իրագործել համապարփակ մոտեցում համախմբելով ենթակառուցվածքների, մարդկային կապիտալի, հանրային ծառայությունների ոլորտներում պետական ու մասնավոր ներդրումները և խթանելով տնտեսական գործունեությունը:

11. Վերոնշյալ ռազմավարական նպատակներին հասնելու համար ռազմավարական չափորոշիչներն են՝

1) **Մինչև 2025թ**. մարզի տնտեսական աճի ապահովում՝ կիրառելով տնտեսության վարման ինտենսիվ մեթոդներ, ստեղծել նոր աշխատատեղեր, կրճատել աղքատության ցուցանիշը՝ 32%-ից հասցնելով 20%-ի: Ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թիվը հասցնել մինչև 65%-ի, ակտիվ կազմակերպությունների թվի աճ՝ 10%-ով:

2) Ապահովել համայնքների համաչափ զարգացում, ռեսուրսների համաչափ տեղաբաշխմամբ, դիվերսիֆիկացիայի միջոցով: 2025 թվականին ՀՆԱ-ն հասցնել ՀՀ միջին ցուցանիշի նկատմամբ 70%-ի: Միևնույն ժամանակահատվածում յուրաքանչյուր տարածաշրջանի համար գործազրկության մակարդակը նվազեցնել 12-%-ով, իսկ մինչև 2025թ. մարզի երկու (Ճամբարակ և Վարդենիս) տարածքների համաչափ զարգացման ապահովում՝ շեշտը դնելով սահմանամերձ և թույլ զարգացած բնակավայրերի վրա:

3) Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մինչև 2025 թվականը կբարձրացվի մարզային և տեղական դերակատարների ակտիվությունը և մարդկային կապիտալի կառավարման հմտությունները, իսկ մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումները կիրականացվեն յուրաքանչյուր տարի մասնակիցների թվի 80%-ի չափով:

12. ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման քաղաքականությունը սերտորեն համակարգվում է նախարարությունների միջոցով և իրականացվում միջազգային, ազգային և ենթազգային դերակատարների միջև համագործակցությամբ: ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացումը ղեկավարվում է ռազմավարական տեսլականով, որի համաձայն մարզում կակտիվացվի զարգացման աճը, կապահովի համաչափություն և կայունություն:

13. ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարությունը կենտրոնացած է գյուղատնտեսության, մասնավոր հատվածի, զբոսաշրջության գործարար միջավայրի բարելավման, մարդկային կապիտալի ամրապնդման, նորարարության և հիմնական ենթակառուցվածքների խթանման վրա:

III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բնակչություն՝
01.01.2016թ. դրությամբ՝
231.8 հազար մարդ
Մարզկենտրոն՝
ք. Գավառ
Տարածաշրջաններ և Քաղաքներ՝
Գավառ,
Ճամբարակ,
Մարտունի,
Սևան,
Վարդենիս

14. ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Տավուշի և Լոռու մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանի Հանրապետությանը, հարավից՝ ՀՀ Վայոց Ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից-արևելք՝ 85 կմ: Մարզն իր մեջ ընդգրկում է Գավառի, Ճամբարակի (նախկին՝ Կրասնոսելսկ), Մարտունու, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանները: Մարզկենտրոնը՝ Գավառ քաղաքն է: ՀՀ Գեղարքունիքն ամենախոշոր մարզն է՝ տարածքը կազմում է 5349 քառ. կմ և զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի 18%-ը:

Աղյուսակ 1. Մարզի հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության (2016թ.)

Նպատակային նշանակություններ	Ընդամենը (հա)	Տոկոսային հարաբերությունը (%)
1.Գյուղատնտեսական նշանակության հողեր	345528.0	**64.6**
2. Բնակավայրերի հողեր	21530.9	4.02
3. Արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	3690.7	0.69
4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և այլ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	1381.4	0.26
5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր	148600.1	27.78
6. Հատուկ նշանակության հողեր	259.6	0.05
7. Անտառային հողեր	11985.1	2.24
8. Ջրային հողեր	1321.0	0.25
9. Պահուստային հողեր	620.0	0.11
Ընդամենը հողեր	534916.8	100

Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի հողային հաշվեկշիռ:

15. Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի 16.9%-ը:

16. Մարզն իր մեջ ներառում է 5 քաղաք՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս և 93 գյուղական բնակավայրեր:

17. Ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (1325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3598 մ): Բարձր լեռներ են Սպիտակասարը (3555 մ), Վարդենիսը (3522 մ), Գեղասարը (3446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ), առկա են նաև խառնարանային լճեր՝ Աժդահակ և Արմաղան (մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ):

18. ՀՀ Գեղարքունիքի մարզում է գտնվում բարձր լեռնային (բարձրությունը ծովի մակերևույթից 1900 մ) եզակի էկոհամակարգով Սևանա լիճը, որի մակերեսը կազմում է 1.26 հազ. քառ. կմ, ծավալը 35.8 մլրդ. խմ: Սևանա լիճը Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է, որը հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Լիճը էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա: Կենսաբանական բազմազանության պահպանությունն ուղղված է Սևանա լճի ավազանի բնական պաշարների երկարաժամկետ օգտագործման կարգավորմանը, որը կնպաստի ոչ միայն ավազանի, այլև ողջ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը:

19. Մարզի տարածքում է գտնվում «Սևան ազգային պարկը» (կազմավորվել է 1978թ-ին): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը՝ 147.5 հազար հեկտար, որից 24.9 հազար հեկտարը առափնյա ցամաքային տարածքներ են: Այստեղ պահպանվել են բույսերի 1600 և կենդանիների 330 տարատեսակներ: Տարածքում շատ են հրաբխային կոները, որոնցից հայտնի են հատկապես Արմաղանն ու Աժդահակը, որոնց խառնարաններում գտնվում են համանուն լճերը: Գլխավոր լեռնաշղթաներն են Գեղամա, Արեգունի, Արևելյան Սևանի, Վարդենիսի: Սևանի ավազանն արգավանդ հողերով հարուստ է, հատկապես կարևոր է Մասրիկի դաշտը՝ 1900-2200մ բարձրություններում: Այն կազմում է շուրջ 10000 հեկտար՝ մարզի վարելահողերի մոտ 12.3%:

20. Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռները ցուրտ են, առաջանում է կայուն ձնածածկույթ: Հունվարյան միջին ջերմաստիճանը -5°-10° է: Ամառները տաք են, արևոտ: Միջին ջերմաստիճանն հասնում է +18°+20°: Տեղումները քիչ են՝ 400-450 մմ, իսկ բարձրադիր շրջաններում մինչև 1000 մմ, արևային օրերի քանակը կազմում է 125 օր:

21. Արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Օգտակար հանածոներից մեծ արժեք են ներկայացնում ոսկու (Սոթք), քրոմիտի (Շորժա), տորֆի, բազալտի, բնական շինանյութերի, հանքային ջրերի (Գավառ, Լիճք) և այլ պաշարները: Մետաղական հանքաքարերի արդյունահանման ոլորտում առաջավոր դիրք է զբաղեցնում «ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ-ն: 2014 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզում մետաղական հանքաքարի թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով հաշվարկված կազմել է 8279.1 մլն դրամ, իսկ 2015 թվականին՝ 12855.4 մլն դրամ: Աճը կազմել է 4576.3 մլն դրամ կամ ավելացել է 55%-ով: Հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման ոլորտներում հատկապես կրաքարի (Արտանիշի), քրոմիտի (Շորժա), բազալտի, բնական շինանյութերի և այլ պաշարների մասով մարզում թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով հաշվարկված կազմել է 2014 թվականին կազմել է 27.7 մլն դրամ, իսկ 2015 թվականին՝ նվազել է հասնելով 22.0 մլն դրամի: Նվազումը կազմել է 5.7 մլն դրամ կամ 20.6%:

22. Մշակող արդյունաբերության ոլորտում հատկապես սննդի արտադրությունում մարզում թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով հաշվարկված կազմել է

2014 թվականին կազմել է 9 580.9 մլն դրամ, իսկ 2015 թվականին աճել է հասնելով 9731.4 մլն դրամի: Աճը կազմել է 150.5 մլն դրամ կամ ավելացել է 1.5%-ով:

23. ՀՀ Գեղարքունիքի մարզն ունի առավելապես գյուղատնտեսական ուղղվածություն: Մարզում գյուղատնտեսությունում աշխատում է շուրջ 66 000 մարդ: Տարածաշրջանում լայն տարածում է գտել անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնարդյունաբերությունը (հիմնական հենքը Սևանա լիճն է), և բուսաբուծությունը՝ հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի մշակությունը:

24. Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Սևանա լճի հյուսիս-արևելյան և հյուսիսային ափերով անցնում է ակտիվ տեկտոնական ճեղքվածք՝ 0.5-0.6 սմ/տարի շարժումով: Գրունտների առավելագույն արագացումները գրանցված են Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան ափերում: Կապիտալ շինարարության համար առավել բարենպաստ են մարզի հարավային և արևմտյան հատվածները, որտեղ գրունտների առավելագույն արագացումները տատանվում են 0.5-0.6 սմ/տարի:

25. Մարզի զարգացման խոչընդոտներից է համարվում երկարատև, ցուրտ ձմեռը, բարձր լեռնային գոտիներում գտնվելը և Ադրբեջանի Հանրապետության հետ սահմանամերձ լինելը, մարզի նոսր բնակեցված լինելը ու որոշ բնակավայրերի մեծ հեռավորությունը մարզկենտրոնից:

3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

26. ՀՀ Գեղարքունիքի մարզը իրենից ներկայացնում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը, բնակչության խտությունը կազմում է 43 մարդ/1կմ2: 2016թ. տարեսկզբի դրությամբ մարզի մշտական բնակչության թվաքանակը կազմել է 231.8 հազ. մարդ, որից մեծ մասը՝ 162.6 հազար մարդ կամ 70.2%-ը գյուղական, իսկ 69.2 հազար մարդ կամ 29.8%-ը քաղաքային բնակչությունն է: Տղամարդկանց թվաքանակը կազմում է 116.5 հազար մարդ կամ բնակչության 50.2%, իսկ կանանց թվաքանակը՝ 115.3 հազար մարդ, որը կազմում է բնակչության 49.8%-ը: ՀՀ Գեղարքունիքի մարզի մշտական բնակչությունը 2012-2016թթ. ժամանակահատվածում նվազել է 1.5%-ով, այսինքն՝ 235.4 հազարից հասնելով 231.8 հազարի (3600 մարդ): Նույն ժամանակահատվածում քաղաքային բնակչությունը ևս նվազել է՝ 71.5 հազարից հասնելով 69.2 հազարի, այսինքն 3.2%-ով կամ (2300 մարդ), իսկ գյուղական բնակավայրերում՝ 163.9 հազարից նվազել է 162.6 հազարով, այսինքն՝ 0.8%-ով կամ (1300 մարդ):

Աղյուսակ 2. ՀՀ Գեղարքունիքի մարզի մշտական բնակչությունը 2012 և 2016 01/01 դրությամբ

	2012	2016	2012-2016թթ. բնակչության թվաքանակի փոփոխությունը %
Հայաստանի Հանրապետություն	3.021.400	2. 998.600	99.2
Գեղարքունիք	**235.400**	**231.800**	**98.5**

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Մշտական բնակչության թվաքանակը 2012-2016թթ. http://armstat.am/file/doc/99500793.pdf

27. Մարզի բնակչության խտությունը (43 մարդ 1 կմ^2) ցածր է հանրապետության միջին մարզային ցուցանիշից (101 մարդ 1 կմ^2) շուրջ 2 անգամ (ներառելով Երևանը): Մարզը բնակչության խտությամբ մոտ է հարակից ՀՀ Տավուշի մարզին (46 մարդ 1 կմ^2), ՀՀ Վայոց մարզին (22 մարդ 1 կմ^2) և շուրջ 78 մարդով զիջում է բնակչության խտությամբ ՀՀ Կոտայքի մարզին (122 մարդ 1 կմ^2):

Գծապատկեր 1. ՀՀ Գեղարքունիքի մարզի մշտական բնակչության թվաքանակի թվի փոփոխությունները գյուղական և քաղաքային համայնքներում 2011–2015թթ. ընթացքում համեմատած ՀՀ-ն և ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշների հետ



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Քաղաքային/ գյուղական մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշները 2011-2015թթ..
http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf

28. Վերը նշված գծապատկերում երևում է միգրացիայի ցուցանիշները, ըստ տարիների: Մարզի գյուղական և քաղաքային համայնքներում 2011-2015թթ. նկատվել է բնակչության արտագաղթի աճ, որը պայմանավորած է հիմնականում սոցիալ-տնտեսական իրավիճակով: Արտագաղթը գյուղական համայնքներից իր տոկոսային մեծությամբ համեմատական է հանրապետության միջին ցուցանիշների հետ, իսկ քաղաքային բնակավայրերից արտագաղթի տեմպերը շուրջ 10 անգամ ավել է, քան հանրապետության միջին ցուցանիշը: Հանրապետության քաղաքային համայնքներից արտագաղթել է 2012-2015թթ.՝ 5700 մարդ, այդ թվում ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաքներից՝ 2300 մարդ: 2011 թվականի մարդահամարի տվյալներով ՀՀ Գեղարքունիքի մարզում քաղաքային բնակչությունը կազմել է 71.4 հազար մարդ, որը կազմում է ընդհանուր բնակչության 30.4%, գյուղական բնակչությունը կազմել է 163.7 հազար մարդ, որը կազմում է ընդհանուր բնակչության 69.6%: 2015 թվականի տարեսկզբի դրությամբ քաղաքային բնակչությունը ՀՀ-ում կազմել է 1912.9 հազար մարդ, որը կազմում է ընդհանուր բնակչության 63.5%, գյուղական բնակչությունը կազմել է 1097.7 հազար մարդ, որը կազմում է ընդհանուր բնակչության՝ 36.5%: ՀՀ Գեղարքունիքի մարզում քաղաքային բնակչությունը կազմել է 70.2 հազար մարդ, որը կազմում է ընդհանուր բնակչության՝ 30.1%, գյուղական բնակչությունը կազմել է 162.8 հազար մարդ, որը կազմում է ընդհանուր բնակչության՝ 69.9%, իսկ ՀՀ Տավուշի մարզում քաղաքային բնակչությունը կազմել է 53.5 հազար մարդ, որը կազմում է ընդհանուր բնակչության՝ 42.2%, գյուղական բնակչությունը կազմել է 73.2 հազար մարդ, որը կազմում է ընդհանուր բնակչության՝ 57.8%:

Աղյուսակ 3. ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության գենդերային կազմի դինամիկան 2011-2015թթ.

(%)

	2011		2012		2013		2014		2015	
	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ
Բնակչությունը	49.4	50.8	44.3	50.7	49.4	50.6	49.5	50.5	49.7	50.3
Ծնվածներ	44.2	55.8	44.7	55.3	45.9	54.1	46.6	53.4	44.9	55.1
Մահացածներ	47.8	52.2	46.0	54.0	47.8	52.2	48.7	51.3	47.4	52.6

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Բնակչության (ըստ սեռերի) բնական շարժի հիմնական ցուցանիշները 2011-2015թթ. http://armstat.am/file/doc/99500793.pdf *Ըստ միջին տարեկան ցուցանիշների:

Գծապատկեր 2. ՀՀ Գեղարքունիքի մարզի հինգ տարածաշրջանների բնակչության խտությունը(մարդ/1կմ²) 2011-2015թթ.



Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին

29. 2016թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի մշտական բնակչության մեծամասնությունը կուտակված է Սևանի, Մարտունու և Գավառի տարածաշրջանում՝ հասցնելով բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա 76-101 մարդ, այստեղ են բնակվում մարզի բնակչության շուրջ 77.8% և մակերեսով կազմում է մարզի՝ 41.7%, իսկ ամենացածր խտությունը՝ Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանում է՝ մեկ քառակուսի կիլոմետրի վրա կազմել է 19-33 մարդ, որտեղ բնակվում են մարզի 22.2% բնակիչները, իսկ տարածքը կազմում է՝ 34.6%: (Տարածքի 23.7%-ը կազմում է Սևանա լիճը):

Գծապատկեր 3. ՀՀ Գեղարքունիքի և ՀՀ Տավուշի մարզերի մշտական բնակչությունն ըստ սեռերի և տարիքային խմբերի 2016 թվականին

(մարդ)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշներն ըստ սեռերի և տարիքային խմբերի http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf

30. 2016 թվականի առաջին կեսին ծնունդներն ըստ սեռերի ՀՀ Գեղարքունիքի մարզում կազմել է 120 տղա, 100 աղջիկ: ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության միջին տարիքը մեծանում է, այսպես 2016թ. տարեսկզբի դրությամբ 15 տարեկան էին բնակչության՝ 21.9%, 16-62 տարիքային հասակում են գտնվում մարզի բնակչության՝ 67.8%, իսկ 63-ից բարձր՝ 10.3%-ը: Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում մինչև 15 տարեկան էին ընդհանուր բնակչության համապատասխանաբար՝ 20.8%-ը, 16-62 տարիքային հասակում են գտնվում ՀՀ ընդհանուր բնակչության՝ 66.3%, իսկ 63-ից բարձր՝ 12.9%-ը:

31. ՀՀ 2011թ. մարդահամարի տվյալներով մարզում տարրական կրթություն ունեն 20 999 մարդ, որը կազմում է մարզի 6 և բարձր տարիքի բնակչության՝ 9.8%-ը, հիմնական կրթություն ունեն 22 781 մարդ՝ 10.6%, միջնակարգ կրթություն ունեն 111 501 մարդ՝ 51.9%, միջնակարգ մասնագիտական կրթություն ունեն 24 807 մարդ՝ 11.5%, բարձրագույն կրթություն ունեն 20 596 մարդ՝ 9.6%:

32. ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչությունը հիմնականում հայեր են, որոնք կազմում է ընդհանուր բնակչության 99.7%-ը: Կան նաև ռուսներ, հույներ, եզդիներ և այլ ազգեր: Ազգային փոքրամասնությունները հիմնականում ունեն ամուսնական կապեր հայերի հետ և տեղի է ունեցել ազգային առանձնահատկությունների միաձուլում հայկական ազգային ավանդույթների հետ:

3.3 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

33. ՀՀ Գեղարքունիքի մարզում 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կա 5 քաղաքային և 87 գյուղական համայնք: Գյուղական բնակչությունը տեղաբաշխված է անհամամասնորեն: Մարզի գյուղական համայնքներում մեծ տեսակարար կշիռ են կազմում խոշոր գյուղական համայնքները, որտեղ բնակվում են մարզի գյուղական բնակչության՝ 67.7%, խոշոր բնակավայրերի թիվը 21 կամ բնակավայրերի՝ 23.4%, իսկ փոքր գյուղական համայնքներում բնակվում են գյուղական բնակչության մոտ՝ 13%, փոքր բնակավայրերի թիվը՝ 47 կամ գյուղական բնակավայրերի՝ 53.5%:

34. **Գավառ** քաղաքը ՀՀ Գեղարքունիքի մարզկենտրոնն է: Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջին, Գավառագետի ստորին հոսանքի ավազանում: Հեռավորությունը Երևանից 98կմ է, Սևան երկաթուղային կայարանից՝ 36 կմ: Համայնքի բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 19 500 մարդ: Ըստ բնակչության քանակության հանդիսանում է հանրապետության 15-րդ քաղաքը, այստեղ է բնակվում մարզի քաղաքային բնակչության շուրջ՝ 28.2%: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը կազմում է 25 013.08 հա, որից բնակավայրերի հողերը՝ 1 481.80 հա: Գավառ քաղաքը ունեցել է զարգացած արդյունաբերական համալիր, սակայն կազմակերպությունների մեծ մասը կամ լուծարվել են կամ գործում են իրենց հզորության աննշան մասով: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը եղել է մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են ունեցել մեքենաշինության, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը: Կարևոր ռազմավարական նշանակություն ունի Գավառի օդանավակայանը, որն անհրաժեշտ է վերագործարկել: Գավառ քաղաքի բնակչության նվազումը մինչև 2011 թվականից մինչև 2016թ. կազմել է՝ 6.5%, որը գերազանցում է միջին մարզային ցուցանիշը շուրջ 4 անգամ և քաղաքային բնակչության նվազման միջին Հանրապետական ցուցանիշը շուրջ 20 անգամ: Գավառ քաղաքից են արտագաղթել մարզի քաղաքային բնակչության շուրջ՝ 56%-ը: Քաղաքի բնակչության նվազմանը նաև նպաստում է ցածր ծնելիությունը: Գավառ քաղաքի հիմնական զարգացման խնդիրներից է հանդիսանում պոստ ինդուստրիալ չօգտագործվող, լքված տարածքները: Գավառ

քաղաքը 1980-ական թվականներին հանդիսացել է արդյունաբերական կենտրոն, այստեղ աշխատել և գործել են 8-ից ավել խոշոր արդյունաբերական գործարաններ, որոնցից ներկայումս չկան գործող կազմակերպություններ: Քաղաքում առկա է պոստ ինդուստրիալ տարածքների բարեկարգման և կրկնակի օգտագործման խնդիր: Այսպիսի տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 84.77 հա, որից 4.79 հա քաղաքացու սեփականություն, 38.54 հա իրավաբանական անձի սեփականություն, իսկ 41.44 հա համայնքային սեփականություն: Այս տարածքները կազմում են քաղաքի ընդհանուր տարածքի՝ 12%-ը: Գավառ քաղաքի զարգացման խնդիրներից է հադիսանում նաև գործազրկությունը, որը կազմում է 1152 մարդ: Այն հանդիսանում է արտագաղթի խթաններից մեկը:

35. Սևան քաղաքը տեղակայված է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին, Երևանից 66 կմ հյուսիս-արևելք: Քաղաքի բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է՝ 19 200 մարդ, ըստ բնակչության քանակության հանդիսանում է հանրապետության 16-րդ քաղաքը, այստեղ է բնակվում մարզի քաղաքային բնակչության՝ շուրջ 27.7%-ը: Գտնվում է ծովի մակերևույթից 1920 մ բարձրության վրա և զբաղեցնում է 1784.68 հա տարածք, որից բնակավայրը՝ 810 հա: Համայնքն իր ափամերձ տարածքներով զբոսաշրջության, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է: Այն առանձնանում է ջրային ռեսուրսներով, բնապահպանական և մշակութային հուշարձաններով: Քաղաքում նախկինում գործել են 12 մանր արդյունաբերական, 1 շինարարական, տրանսպորտային, 38 ծառայություններ մատուցող, 129 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից
6-ը հանրային սննդի օբյեկտներն են, 4-ը սպառողական ապրանքների և 1-ը գյուղատնտեսական արտադրանքի շուկա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունները եղել է մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են ունեցել շինանյութերի, քիմիական, սննդի և մեքենաշինության արդյունաբերության արտադրությունները: Քաղաքում առկա է պոստ ինդուստրիալ տարածքների բարեկարգման և կրկնակի օգտագործման խնդիր: Այսպիսի տարածքների ընդհանուր ծավալը կազմում է 123.45 հա, որից 2.99 հա քաղաքացու սեփականություն, իսկ 120.46 հա համայնքային սեփականություն: Սևան համայնքի վարչական սահմանում ընդգրկված է Գագարին գյուղը, որի տարածքը կազմում է 147.03 հա: Պոստ ինդուստրիալ տարածքները հիմնականում գտնվում են Գագարին թաղամասում (գյուղում), որտեղ բնակվում է 1 379 մարդ, կամ Սևան քաղաքի բնակչության շուրջ 7%-ը: Գործարանների շուրջ՝ 90%-ը չեն աշխատում, այսպիսի տարածքները կազմում են Սևան քաղաքի տարածքի շուրջ՝ 7%-ը: Սևան քաղաքի բնակչությունը 2011 թվականից մինչև 2016 թվականը գրեթե մնացել է անփոփոխ (նվազել 100 մարդով, կամ 0.5%), որը շատ մոտ է քաղաքային բնակչության նվազման միջին Հանրապետական ցուցանիշին: Սևան քաղաքի հիմնական զարգացման խնդիրներից է հանդիսանում աշխատատեղերի բացակայությունը, ներդրումների պակաս, ներքին ու արտաքին արտագաղթը և այլ հիմնախնդիրներ:

36. Մարտունի քաղաքը գտնվում է Սևանա լճի հարավ-արևմուտքում՝ Երևանից 126կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից 33 կմ է: Քաղաքի բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է՝ 12200 մարդ, ըստ բնակչության քանակության հանդիսանում է հանրապետության 25-րդ քաղաքը, այստեղ է բնակվում մարզի քաղաքային բնակչության շուրջ՝ 17.6%-ը: Զբաղեցնում է 4514.14 հա տարածք, որից բնակավայրը՝ 602.2 հա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը նախկինում եղել է մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են ունեցել մեքենաշինության, շինանյութերի, քիմիական և սննդի արդյունաբերության ճյուղերը: Մարտունի քաղաքի բնակչության նվազումը 2011 թվականից մինչև 2015 թվականը կազմել է՝ 5.4%, որը գերազանցում է միջին մարզային ցուցանիշը շուրջ 3.5 անգամ և քաղաքային բնակչության նվազման միջին Հանրապետական ցուցանիշը շուրջ

18 անգամ: Այստեղից են արտագաղթել մարզի քաղաքային բնակչության շուրջ՝ 30%-ը: Քաղաքի բնակչության նվազմանը նաև նպաստում է ցածր ծնելիությունը: Մարտունի քաղաքի հիմնական զարգացման խնդիրներից է հանդիսանում աշխատատեղերի բացակայությունը, ներդրումների պակաս, ներքին ու արտաքին արտագաղթը և այլ հիմնախնդիրներ: Քաղաքում առկա է պոստ ինդուստրիալ տարածքների բարեկարգման և կրկնակի օգտագործման խնդիր: Այսպիսի տարածքների ընդհանուր ծավալը կազմում է 66.85 հա, կամ քաղաքի տարածքի 5.3%, որից 25.23 հա քաղաքացու սեփականություն, 41.37 հա իրավաբանական անձի սեփականություն, իսկ 0.05 հա համայնքային սեփականություն: Վերը նշված կազմակերպությունների շուրջ 80%-ը չեն աշխատում:

37. Վարդենիս քաղաքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի հարավարևելյան մասում, Մասրիկ գետի հովտում, համանուն արտեզյան ավազանի տարածքում: Հանրապետության մայրաքաղաք Երևանից 170 կմ, մարզկենտրոնից 75 կմ հեռավորության վրա: Համայնքի վարչական տարածքը կազմում է 3 761.2 հա, որից քաղաքի տարածքը՝ 923.7 հա: Համայնքի բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է՝ 12600 մարդ, ըստ բնակչության քանակության հանդիսանում է հանրապետության 24-րդ քաղաքը, այստեղ է բնակվում մարզի քաղաքային բնակչության շուրջ՝ 18.2%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում: Վարդենիս քաղաքի բնակչությունը 2011 թվականից մինչև 2016 թվականը գրեթե մնացել է անփոփոխ (նվազել 100 մարդով, կամ 0.5%), որը շատ մոտ է քաղաքային բնակչության նվազման միջին Հանրապետական ցուցանիշին Վարդենիս քաղաքի հիմնական զարգացման խոչընդոտներից է հանդիսանում աշխատատեղերի բացակայությունը, ներդրումների պակաս, ներքին ու արտաքին արտագաղթը և սահմանամերձ լինելը:

38. Ճամբարակ (մինչև 1996-ը՝ Կրասնոսելսկ) քաղաքը գտնվում է մարզի հյուսիս-արևելյան մասում, ՀՀ արևելյան սահմանից 1 կմ հեռավորության վրա: Լեռնային բնակավայր է, ծովի մակերևույթից միջին բարձրությունը 1860 մ է: Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 125 կմ է, իսկ մարզկենտրոն Գավառից՝ 90 կմ: Զբաղեցնում է 9 707.55 հա տարածք, որից բնակավայրը՝ 455.57 հա: Բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 5700 մարդ, ըստ բնակչության քանակության հանդիսանում է հանրապետության 36-րդ քաղաքը, այստեղ է բնակվում մարզի քաղաքային բնակչության շուրջ 8.2%-ը: Ճամբարակ քաղաքի բնակչության նվազումը 2011 թվականից մինչև 2015 թվականը կազմել է 1.75%, որը մոտ է միջին մարզային ցուցանիշին և գերազանցում է քաղաքային բնակչության նվազման միջին հանրապետական ցուցանիշը շուրջ 2 անգամ:

Ճամբարակ քաղաքում են գտնվում մարզի քաղաքային բնակավայրերի (փողոցներ) ճանապարհների 7.8%-ը և բնակավայրերի ասֆալտապատ փողոցների 2.4%-ը, կուտակված է մարզի բազմաբնակարան շենքերի 6.3%-ը, կամ 24 շենք: Ճամբարակի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Ճամբարակ քաղաքի հիմնական զարգացման խնդիրներից է հանդիսանում աշխատատեղերի բացակայությունը, ներդրումների պակաս, ներքին և արտաքին արտագաղթը և սահմանամերձ տարածքը:

39. Գեղարքունիքի մարզի քաղաքային համայնքների զարգացման հիմնախնդիրները: Մարզի բոլոր 5 քաղաքները ունեն բնակավայրի գլխավոր հատակագծեր, որոնց հիման վրա իրականացվում են հողերի օտարման, օգտագործման և քաղաքաշինական գործունեություն:

40. Մարզի 4 քաղաքները՝ Գավառը, Սևանը, Մարտունին, Վարդենիսը տեղակայված են ինտենսիվ յուրացված տարածագոտիներում և շրջապատված են արժեքավոր

գյուղատնտեսական հողերով, իսկ Վարդենիս, Գավառ, Մարտունի քաղաքները տեղակայված են արտեզյան, խմելու, հանքային ջրերի ավազանների վրա:

41. Ինժեներական ենթակառուցվածքներով (հիմնականում կոյուղացման) ցածր մակարդակները ստեղծում են ստորերկրյա և Սևանա լճի ջրերի ռազմավարական նշանակության պաշարների աղտոտման վտանգ: Մարզի միայն Ճամբարակ քաղաքն է գտնվում թույլ յուրացված գոտում, ունի տարածքային զարգացման հնարավորություններ իր համայնքի սահմաններում: ՀՀ Գեղարքունիքի մարզի ինտենսիվ յուրացված գոտու քաղաքների համար (Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս) առանձնահատուկ նշանակություն ունի քաղաքների տարածքային զարգացման նպատակային սահմանափակումների ամրագրումը, որի կարևորագույն չափանիշը շրջակա միջավայրի պահպանման խնդիրն է: Քաղաքների հետագա զարգացումը հիմնականում նախատեսվում է ներքին ռեզերվների և տարածքների քաղաքաշինական յուրացման ինտենսիվության մակարդակի բարձրացման հաշվին, քանի որ քաղաքների տարածքների 30-35%-ը դեռևս շատ էքստենսիվ է օգտագործվում: Քաղաքային բնակավայրերի զարգացումը պայմանավորված է նաև Գավառի օդանավակայանի վերագործարկմամբ, նախատեսված երկաթուղու կառուցման աշխատանքները ավարտին հասցնելը, սննդի ու տեքստիլ արդյունաբերական կազմակերպությունների աշխատանքը:

42. Մարզի պոստ ինդուստրիալ տարածքները հիմնականում չեն օգտագործվում, քանի որ Խորհրդային միության փլուզումից հետո այդ տարածքները սեփականաշնորհվել են: Սեփականատերերը պոստ ինդուստրիալ տարածքները չեն օգտագործել բազմաթիվ սուբյեկտիվ և օբյեկտիվ (ներդրումների և նոր տեխնոլոգիաների բացակայություն, վերապրոֆիլավորման խնդիր և այլն) պատճառներով:

3.4. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

43. ՀՀ Գեղարքունիքի մարզով են անցնում Մ4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման, Սևան-Մարտունի-Գետափ, Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման և Մ4-Շորժա-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհները: ՀՀ Գեղարքունիքի մարզի տնտեսության զարգացումն ամբողջապես կախված է ճանապարհային և երկաթուղային փոխադրումներից, չկան գործող օդանավակայաններ:

44. Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի երթևեկությունը ինտենսիվ է, ծանրաբեռնված է աշխատում հատկապես հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին, կապված Սևանա լճի հանգստյան գոտիների հետ:

Գծապատկեր 4. ՀՀ Գեղարքունիքի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալ համեմատականը ՀՀ, Լոռու և ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշների հետ

(մլն. տոննա-կմ)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության և հանրապետական բեռնաշրջանառության ծավալները 2012-2015թթ. http://armstat.am/am/?nid=50

45. ՀՀ Գեղարքունիքի մարզում 2012-2015 թվականներին բեռնաշրջանառության ցուցանիշը 5.1 մլն. տոննա-կմ-ից հասել է 36.1 մլն. տոննա-կմ: Աճը գրանցվել է հիմնականում Սոթքի և Արտանիշի հանքավայրերից արտահանվող հումքի պահանջարկով: Բեռնաշրջանառության համեմատականը ՀՀ Տավուշի և ՀՀ Լոռու մարզերի հետ բերված է գծապատկերում:

Գծապատկեր 5. ՀՀ Գեղարքունիքի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալի համեմատականը ՀՀ Լոռու և ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշների հետ

(մլն. ուղևոր-կմ)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալները 2012-2015թթ. http://armstat.am/am/?nid=50

46. ՀՀ Գեղարքունիքի մարզում 2012-2015 թվականներին ուղևորաշրջանառության ցուցանիշը 34.8 մլն.ուղևոր-կմ-ից հասել է 47.9 մլն.ուղևոր-կմ, որը հետևողականորեն աճել է: Մարզում ուղևորաշրջանառության ծավալների աճում է ամռան ամիսներին Սևանա լճի հանգստյան գոտիների աշխուժացման հետ:

47. Ներհամայնքային ճանապարհների մատչելիությունը հաշվարկվում է ըստ ճանապարհային երթևեկության տևողության, բնակչության թվի՝ դեպի հարևան համայնքներ կամ Երևան: Միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհների զգալի մասը անցնում է ձմեռային կլիմայական պայմաններ ունեցող լեռնային և բարձր լեռնային գոտիներով, ձմեռը հաճախակի դառնում են դժվարանցանելի, երթևեկության տևողությունը էապես ավելանում է:

Աղյուսակ 4. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիությունը, 2015թ.

	Ներմարզային հասանելիություն, րոպե	Մարզից Երևան հասանելիություն, րոպե	Անհավասարությունը միջև ներհամայնքային հասանելիության միջև, %
Գեղարքունիք	**31**	**74**	**239**
Լոռի	16	92	575
Տավուշ	33	101	306

Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին

48. ՀՀ Գեղարքունիքի մարզի պատմամշակութային կենտրոնները գտնվում են Գավառի, Սևանի, Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններում: Ստորև ներկայացվում է մարզի պատմամշակութային կենտրոնների հեռավորությունը Երևան քաղաքից, Սևան և Դիլիջան հանգստյան կենտրոններից:

Աղյուսակ 5. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներ, պատմամշակութային կենտրոններ

Համայնքներ	**Հասանելիությունը՝ դեպի ազգային կենտրոններ (րոպե)**		
	Երևան	**Սևան**	**Դիլիջան**
Գավառ	98	66	78
Սևան	66	-	41
Մարտունի	130	68	109
Վարդենիս	168	106	147

Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին

49. Մարզում ավտոտրանսպորտի երթևեկության համար առավել վտանգավոր հատվածներ են համարվում Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի Լճաշեն, Նորաշեն, Լճափ և Նորատուս, ինչպես նաև Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Ծովինար և Արծվանիստ համայնքների վարչական տարածքներով անցնող հատվածները, որտեղ պարբերաբար տեղի են ունենում ճանապարհատրանսպորտային պատահարներ, որոնք, երբեմն, ուղեկցվում են զոհերով:

50. 2015թ. մարզում գրանցվել են թվով 186 ճանապարհատրանսպորտային պատահարներ, որոնց արդյունքում արձանագրվել են 34 մահվան դեպք, իսկ 2016թ. 11 ամիսների ընթացում գրանցվել են 271 ճանապարհատրանսպորտային պատահարներ, որոնց արդյունքում արձանագրվել են 31 մահվան դեպք:

51. Երկաթուղի: Մարզի տարածքով է անցնում Սոթք տանող երկաթգիծը, որի Ծաղկունք-Սոթք վազքուղու երկարությունը կազմում է 141 կմ: Մարզում գործում են Սևանի, Շորժայի, Վարդենիսի և Սոթքի երկաթուղային կայարանները, որոնք մարզի տնտեսության ակտիվացման ժամանակ կարող են մեծ խթան հանդիսանալ շահավետ բեռնափոխադրումների իրականացման համար: Երկաթուղային կայարանները ներկայումս օգտագործվում են իրենց հնարավորությունների շուրջ 50%-ը: Սևան-Շորժա-Վարդենիս ուղղությամբ ներկայումս գործում է երկու գնացք՝ որոնցով հիմնականում իրականացվում են բեռնափոխադրումներ, իսկ ամառվա ընթացքում նաև ուղևորափոխադրումներ: Հեռանկարում քննարկման առարկա կարող է դառնալ Հայաստան-Իրան երկաթուղու կառուցումը, որը կարող է անցնել ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքով: Երկաթգծով իրականացված բեռնափոխադրումների ծավալներն հետևյալն են՝ 2013թ. 1.34 մլն.տոննա, 2014թ.՝ 1.31 մլն.տոննա, 2015թ.՝ 1.1 մլն.տոննա, 2016թ.՝ 1.3 մլն.տոննա:

52. Հեռահաղորդակցություն: Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապն ապահովվում է հանրապետություն գործող բոլոր

օպերատորների կողմից, այն է՝ «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվա սելլ/ՄՏՍ ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ): «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ) ՀՀ Գեղարքունիքի մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Հայաստանի Հանրապետության փոստային կապի «Հայփոստ-թրաստ» ԲԲԸ ՀՀ Գեղարքունիքի մարզի հինգ փոստային մասնաճյուղերը սպասարկում են մարզի 92 համայնքներին:

53. ՀՀ Գեղարքունիքի եթերային հեռուստահաղորդումները հեռարձակվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ Գեղարքունիքի տարածքային բաժնի կողմից սպասարկվող թվային կայանների միջոցով: Մարզի տարածքում հեռարձակվում են «Հ1», «Հ2», «RTR-PLANETA», «Արմենիա», «Կենտրոն», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Շողակաթ» և մարզի տարածքում տեղակայված՝ «ՔյավառTV», «ՋանգակTV» և «STV1» հեռուստաընկերությունների ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Մարզի բնակավայրերը գրեթե ամբողջությամբ ապահովված են ինտերնետ ծածկույթով և կաբելային հեռուստատեսությամբ:

3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

54. Մարզի տարածքում գործում են 816.4 կմ ավտոճանապարհներ, որից միջպետական նշանակության 283.1 կմ, հանրապետական նշանակության 113.4 կմ և մարզային (տեղական) նշանակության 419.9 կմ: Հիմնանորոգված են միջպետական նշանակության ճանապարհներից 269.6 կմ, հանրապետական նշանակության ճանապարհներից 86.3 կմ և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներից 151.6 կմ: Ընդհանուր առմամբ հիմնանորոգված է մարզի պետական նշանակության ճանապարհներից 499.5 կմ, որը կազմում է ճանապարհային ցանցի 61.2%-ը:

Աղյուսակ 6. Մարզում ճանապարհային ցանցի խտությունը

Նշանակություն	Երկարությունը, (կմ)	Խտությունը 1կմ. ք հաշվով (կմ /կմ ք)	Խտությունը 10 000 բնակչի հաշվով , (կմ/10 000 բնակիչ)
Միջպետական	283.1	0.05	12.1
Հանրապետական	113.4	0.02	4.8
Մարզային (տեղական)	419.9	0.078	18.0
Ընդհանուր	816.4	0.15	35.0

Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին

55. ՀՀ Գեղարքունիքի մարզում բեռնափոխադրումներն ու ուղևորափոխադրումները իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով: Երկաթուղային ցանցը մարզում ունի 141 կմ երկարություն, խտությունը 10000 բնակչի հաշվով կազմում է, 6 կմ: Մարզում ուղևորա և բեռնափոխադրումները կազմակերպվում են ինչպես երկաթուղային, այնպես էլ ավտոմոբիլային տրանսպորտով: Ուղևորափոխադրումների կազմակերպման համար սահմանված կարգի համաձայն կազմակերպվում են մրցույթներ: Մարզի տարածքում գործում են 15 միջմարզային երթուղիներ, որոնք մարզի բնակավայրերից ուղևորափոխադրումներ են իրականացնում դեպի Երևան, Վանաձոր, Վեդի քաղաքներ և մարզի այլ բնակավայրեր: Գործում են նաև 25 ներմարզային երթուղիներ, որոնք մարզի համայնքները կապում են նախկին շրջկենտրոնների հետ: Մարզի 73 համայնքներ ապահովված են միջմարզային, ներմարզային կամ ներհամայնքային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով, իսկ 19 համայնքներ, որոնք ընդհանուր ունեն 15336 բնակիչ կամ մարզի բնակչության՝ 6.6%-ը ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտից չի օգտվում:

56. Օդային տրանսպորտի ենթակառուցվածքներ: Մարզում առկա է Գավառի օդանավակայանը, որը չի գործում: Գավառի օդանավակայանում կան շենքային պայմաններ, սակայն թռիչքուղին գրունտային է:

57. Էներգետիկա: ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաքային 5 համայնքները ապահովված են 24 ժամյա էլեկտրամատակարարմամբ: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն 2017թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում էլեկտրաէներգիա են արտադրում 12 փոքր ՀԷԿ-եր, տարեկան մոտ 82.7մլն.կվտժ՝ 29888կՎտ ընդհանուր հզորությամբ: Միևնույն ժամանակ, կառուցման փուլում է գտնվում ևս 1 փոքր ՀԷԿ-եր՝ 209կՎտ ընդհանուր հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա 0.6 մլն.կվտժ–ով:

58. Գազիֆիկացում: ՀՀ Գեղարքունիքի մարզը համարվում է հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից մեկը: Մարզի 92 համայնքներից գազաֆիկացված են 61-ը կամ մարզի համայնքների՝ 66.3%-ը, կամ մարզի բնակչության շուրջ 77.6%-ը բնակվում են գազաֆիկացված բնակավայրերում, 2016 թվականի դրությամբ մարզի գազիֆիկացված բնակարանների թիվը 46161 է, ինչը կազմում է տնային տնտեսությունների 59.9%-ը:

59. Կոշտ թափոններ: Մարզի 34 համայնքներում, որոնցում բնակվում են մարզի բնակչության 60%-ը, աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Բոլոր 5 քաղաքներն ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչության՝ 29.8%-ը: Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր: ՀՀ Գեղարքունիքի մարզի 5 քաղաքները՝ Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս, Ճամբարակ, ընդգրկվել են «ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ թափոնների կառավարման ծրագրում», որը ֆինանսավորվում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Եվրոպական Միության հարևանության ներդրումային գործիք (EUNIF) կազմակերպության և Արևելյան Եվրոպայի էներգիայի արդյունավետության և բնապահպանության գործընկերության կողմից (E5P):

60. Կեղտաջրերի մաքրման կայաններ: Մինչև 2011 թվականը մարզի քաղաքային համայնքների կեղտաջրերը անարգել լցվում էին Սևանա լիճ: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով 2011 թվականից մարզի Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կառուցվեցին կեղտաջրերի մաքրման կայաններ, որի շնորհիվ լուծվեց կեղտաջրերի մաքրման խնդիրը՝ Գավառ քաղաքում 36%-ով, Մարտունի քաղաքում 47%-ով, Վարդենիս քաղաքում 41%-ով: Եվրոպական ներդրումային բանկի միջոցներով Սևան քաղաքում նախատեսվում է մինչև 2019 թվականը կառուցել կեղտաջրերի մաքրման նոր կայան, որի արժեքը կազմում է 3.87մլն. եվրո: Մարզի բնակչության շուրջ 40%-ը չի օգտվում կեղտաջրերի մաքրման կայաններից և կեղտաջրերը լցվում են հատուկ այդ նպատակով փորված կեղտաջրերի հորատանցքեր:

61. Ջրամատակարարում: Մինչև 2011 թվականը մարզի քաղաքային համայնքներում ջրամատակարարումը իրականացվում էր օրական 2-4 ժամ: 2011-2015 թվականներին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն միջազգային ներդրումների հաշվին կառուցվեց շուրջ 805 կմ երկարության խմելու ջրի ջրագծեր, որի արդյունքում մարզի բնակչության 57%-ը (հիմնականում քաղաքային համայնքներում բնակվող) ապահովված է 24 ժամյա ջրամատակարարումով, իսկ 43%-ը ըստ ջրամատակարարման Ժամանակացույցի:

62. Փողոցային լուսավորություն: 2011 թվականին մարզում փողոցային լուսավորություն ուներ ընդամենը 29 համայնք: 2012 թվականին մարզի թվով 11 համայնքներում անցկացվեց փողոցային լուսավորություն: Ներկայումս մարզի 48

համայնքներում անցկացվել է փողոցային լուսավորություն: Մարզի քաղաքային համայնքների փողոցների շուրջ 70%-ը ապահովված է փողոցային լուսավորությամբ:

3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

63. Վերլուծելով մարզի տնտեսական ցուցանիշները պարզ է դառնում, որ մարզը Հայաստանի առաջատար գյուղատնտեսական մարզերից մեկն է: Մարզի մասնաբաժինը ընդհանուր ՀՆԱ-ում կազմում է շուրջ 5% և շուրջ 6%-ով ցածր է մեկ շնչին ընկնող միջին հանրապետական ցուցանիշից: ՀՆԱ-ի վերաբերյալ վիճակագրական տվյալները մարզային կտրվածքով ներկայացված գնահատումը հիմնված է տնտեսության հիմնական ճյուղերի մարզային բաշխվածության և մարզում փաստացի բնակչության քանակի վրա:

Գծապատկեր 6. ՀՀ Գեղարքունիքի մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ արտահայտված ՀՀ-ն և ՀՀ Տավուշի մարզի միջինի տոկոսային հարաբերությամբ, 2011–2015թթ.

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016 և ավելի վաղ հրատարակություններ:

64. ՀՀ Գեղարքունիքի մարզում 2011-2015թթ. ընթացքում միջին հանրապետական ցուցանիշների համեմատ մեկ շնչի հաշվով ՀՆԱ նվազել է: 2011 թվականին 76.0% հանրապետության միջին ցուցանիշից, նվազել է 12%-ով՝ հասնելով 64.0%-ի:

Գծապատկեր 7. ՀՀ Գեղարքունիքի մարզի համախառն գյուղատնտեսական արտադրանքը արտահայտված ՀՀ-ն և ՀՀ Տավուշի մարզի հարաբերությամբ, 2011–2015թթ.

(մլն.դրամ)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ Գեղարքունիքի մարզի համախառն գյուղատնտեսական արտադրանքը 2011 – 2015թ (մլն դրամ) http://armstat.am/file/doc/99500803.pdf

65. 2015 թվականին 2011թ. համեմատությամբ ինչպես մեկ գյուղացիական տնտեսությանն ընկնող համախառն արտադրանքի արժեքը, այնպես էլ գյուղատնտեսության ոլորտում աշխատող մեկ շնչին ընկնող համախառն արտադրանքի

արժեքն ավելացել է 121%-ով, որը հիմնականում հետևանք է գյուղատնտեսության ոլորտում կիրառվող ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրմամբ:

Աղյուսակ 7. Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության հատվածների

	Պետական, դրամ			Ոչ պետական, դրամ		
Տարի	**2013**	**2014**	**2015**	**2013**	**2014**	**2015**
ՀՀ	134.193	146.596	160.522	160.324	172.073	184.416
Գեղարքունիք	**97.413**	**105.881**	**115.511**	**161.185**	**172.681**	**216.487**
Լոռի	96.295	104.491	114.293	137.635	156.501	177.325
Տավուշ	90.080	99.847	111.752	125.555	153.526	161.160

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության հատվածների http://armstat.am/file/doc/99500828.pdf

66. ՀՀ Գեղարքունիքի մարզում 2013-2015 թվականների ընթացքում պետական հատվածում ներգրավված աշխատողների աշխատավարձը աճել, սակայն այն կազմում է միջին հանրապետական ցուցանիշի միայն շուրջ 70%-ը: Միևնույն ժամանակ աճել է նաև ոչ պետական հատվածում ներգրավվածների աշխատավարձը, որոնք ստանում են միջին մակարդակից ավել աշխատավարձ՝ շուրջ 17%: Միևնույն ժամանակ մարզում 2011-2015թթ. շուրջ 27%-ով ավելացել է մեկ շնչին ընկնող համախառն գյուղատնտեսական արտադրանքը:

Աղյուսակ 8. Մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքի ծավալը 2011-2015թթ.

	Ընդամենը մլն ՀՀ դրամ 1 անձի հաշվով				
Տարի	**2011**	**2012**	**2013**	**2014**	**2015**
ՀՀ	263.12	278.01	304.63	330.00	333.89
Գեղարքունիք	**649.11**	**648.13**	**706.11**	**809.87**	**821.40**
Լոռի	242.36	244.57	292.46	323.68	334.22
Տավուշ	302.49	314.89	343.26	358.33	366.53

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ Գեղարքունիքի մարզի համախառն գյուղատնտեսական արտադրանքը 2011 – 2015թ (մլն դրամ) **http://armstat.am/file/doc/99500803.pdf**

Աղյուսակ 9. Գյուղատնտեսության մեջ զբաղվածների եկամուտների վերաբերյալ

	Ցուցանիշի անվանումը	տարեթվեր					
		2011	2012	2013	2014	2015	2015-ը 2011-ի համեմատ.%
1	1 գյուղացիական տնտեսության ընկնող համախառն արտադրանքի արժեքը/հազ.դրամ/	2501	2509	2591	2970	3028	121
2	Գյուղատնտեսության մեջ աշխատող 1 շնչին ընկնող համախառն արտադրանքի արժեքը/հազ. դրամ/	973	963	987	1173	1182	121.5

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016 և ավելի վաղ հրատարակություններ:

Գծապատկեր 8. ՀՀ Գեղարքունիքի մարզում աշխատանք ունեցող անձանց միջին ամսական անվանական աշխատավարձը՝ համեմատած ՀՀ-ն և ՀՀ Տավուշի մարզի միջինի հետ, 2012–2015թթ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության հատվածների **http://armstat.am/file/doc/99500828.pdf**

67. Ինչպես երևում է գծապատկերներից 2013թ.-ին միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ Գեղարքունիքի մարզում կազմել է 112439 ՀՀ դրամ: 2014 թվականին նվազագույն աշխատավարձը մարզում կազմել է 121369 ՀՀ դրամ, 2015թ-ին այն կազմել է 136583 ՀՀ դրամ, աճը կազմել է 15214 ՀՀ դրամ կամ 12%, որն էլ հիմնականում պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ, ինչպես նաև 2013 թվականից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու հետ կապված աշխատավարձերի չափերի վերանայումներով, բնականոն աճերով:

Աղյուսակ 10. Ընտանեկան եկամտի աղբյուրները 2015թ.

Ընտանեկան եկամտի աղբյուրները 2015թ. մեկ շնչի հաշվով միջին ամսական, դրամ		այդ թվում՝						
	ընդամենը դրամական եկամուտներ	վարձու աշխատանք	Ինքնազբաղվա-ծություն	գյուղմթերքի և կենդանի-ների վաճառք	Սեփականու-թյունից եկամուտ	պետական թոշակներ և նպաստներ	տրանսֆերտներ	այլ եկամուտ
Ընդամենը	52.377	28.800	4.842	2.674	115	9.284	4.698	1.964
Գեղարքունիք	**42.205**	**14.272**	**1.974**	**4.563**	**0**	**8.435**	**4.549**	**8.412**
Լոռի	37.413	15.410	1.587	886	0	11.171	5.486	2.873
Տավուշ	38.592	19.985	4.384	884	106	10.443	1.082	1.708

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016թ. և ավելի վաղ հրատարակություններ:

68. Ընտանեկան եկամտի աղբյուրները մարզում առաջանում են հիմնականում վարձու աշխատանքի միջոցով: Ըստ վերը ներկայացված աղյուսակի այն կազմում է 33.8%-ը՝ մեկ շնչի հաշվով: Եկամտի աղբյուր է նաև պետության կողմից իրականացվող աղքատության նպաստ ծրագրով տրված ֆինանսական օգնությունը՝ կազմելով 19.9% մեկ շնչի հաշվով:

69. Մարզում մեծ է արտագնա աշխատանքի մեկնողների քանակը, այդ իսկ պատճառով եկամտի աղբյուր է համարվում դրսից ուղարկված տրանսֆերտները, որոնք կազմում են 11.1%-ը մեկ շնչի հաշվով: Եկամտի աղբյուրները գոյանում են նաև գյուղատնտեսական մթերքների, կենդանիների վաճառքից և այլ միջոցներից:

3.7 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

70. 2013թ. մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը կազմել է 91.8 հազար մարդ կամ մարզի ընդհանուր բնակչության 60.5%-ը, իսկ 2015 թվականին այն նվազել և կազմել է 79.9 հազար մարդ, կամ մարզի ընդհանուր բնակչության 56.8%-ը: Այս մակարդակը ավելի ցածր է քան միջին հանրապետական ցուցանիշը և հարակից ՀՀ Տավուշի մարզը:

Աղյուսակ 11. Տնտեսապես ակտիվ բնակչության քանակը

	Ընդամենը, 1 000 մարդ			Տղամարդ			Կին		
	2013	2014	2015	2013	2014	2015	2013	2014	2015
Հայաստանի Հանրապետություն	1.388.4	1.375.7	1.316.4	709.4	699.9	682.7	679.0	675.7	633.7
Գեղարքունիք	**91.8**	**97.1**	**79.9**	**40.4**	**44.5**	**38.7**	**51.3**	**52.7**	**41.2**
Լոռի	131.1	137.8	114.7	60.2	61.1	56.5	70.9	76.8	58.3
Տավուշ	67.0	65.8	63.3	31.7	32.9	31.0	35.3	32.9	32.3

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Տնտեսապես ակտիվ բնակչության քանակը՝ 2013-2015թթ. http://armstat.am/file/doc/99500828.pdf

Աղյուսակ 12. Ակտիվ բնակչության քանակությունը տոկոսային արտահայտությամբ

	Ընդամենը, %			Տղամարդ			Կին		
	2013	2014	2015	2013	2014	2015	2013	2014	2015
Հայաստանի Հանրապետություն	**63.4**	**63.1**	**62.5**	**72.8**	**73.2**	**72.6**	**55.9**	**55.2**	**54.3**
Գեղարքունիք	60.5	61.0	56.8	60.0	63.6	63.4	60.9	59.0	51.7
Լոռի	62.2	66.1	58.8	69.5	75.8	68.8	57.1	60.0	51.6
Տավուշ	71.2	66.6	65.3	77.9	73.2	68.7	66.1	61.1	62.4

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Տնտեսապես ակտիվ բնակչության քանակությունը տոկոսային արտահայտությամբ՝ 2013-2015թթ. http://armstat.am/file/doc/99500828.pdf

71. Տվյալները ցույց են տալիս, որ գործազրկության խնդիրը ավելի խիստ է քաղաքային համայնքներում, սա բացատրվում է նրանով, որ մարզում բարձր զբաղվածություն ապահովողն է հանդիսանում հիմնականում գյուղատնտեսությունը, այստեղ զբաղվածների թիվը հասնում է մինչև 51 000 մարդի, հիմնական աշխատատեղերը տնտեսության այս ճյուղում ոչ ֆորմալ են: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ մարզում գործազուրկները շատ դժվար են աշխատանք գտնում:

Աղյուսակ 13. Գործազրկության տևողությունը

(մարդ)

Ցուցանիշներ	2013թ. դրությամբ		2014թ. դրությամբ		2015թ. դրությամբ	
	ՀՀ	Գեղարքունիք	ՀՀ	Գեղարքունիք	ՀՀ	Գեղարքունիք
Մինչև 3ամիս	7023	**384**	6251	**536**	7578	**330**
4-6 ամիս	6243	**277**	8505	**755**	8098	**399**
7-11 ամիս	10403	**640**	12358	**1377**	15578	**1435**
1-3 տարի	17902	**1338**	21381	**1389**	26222	**2285**
3 տարուց ավելի	14402	**1498**	17379	**1893**	19528	**2152**
Ընդամենը	55973	**4137**	65874	**5950**	77004	**6601**

Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզային զբաղվածության կենտրոն

72. Ըստ վերը նշված աղյուսակի նկատվում է, որ 2013-2015թթ. ընթացքում մարզում գործազրկության կարգավիճակում գտնվողների թվաքանակը աճել է:

Աղյուսակ 14. Գործազրկության մակարդակը

(%)

	Ընդամենը, %			Տղամարդ			Կին		
	2013	2014	2015	2013	2014	2015	2013	2014	2015
Հայաստանի Հանրապետություն	16.2	17.6	18.5	14.4	15.8	17.6	18.1	19.5	19.5
Գեղարքունիք	**8.2**	**5.8**	**4.7**	**6.6**	**7.7**	**6.4**	**9.4**	**4.1**	**3.1**
Լոռի	19.2	16.9	15.7	17.1	17.3	14.9	21.0	16.7	16.5
Տավուշ	11.3	10.9	12.1	9.5	11.4	14.1	12.9	10.4	10.1

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: գործազրկության մակարդակը 2013-2015թթ. http://armstat.am/file/doc/99500828.pdf

Գծապատկեր 9. Զբաղվածության ոլորտի վերլուծությունը ըստ կրթական ցենզի



Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզային զբաղվածության կենտրոն

73. Գծապատկերից նկատվում է, որ 2015թ-ին բոլոր կրթական ցենզերում գործազուրկների թիվը ավելացել է ինչպես Հայաստանի Հանրապետությունում այնպես էլ ՀՀ Գեղարքունիքի մարզում:

74. **Ըստ կրթության:** 2015թ-ին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը մարզում կազմել է 6601 մարդ: Այդ թվում բարձրագույն կրթություն ունեցողների թիվը կազմում է գործազուրկների թվի 6.4%-ը կամ 422 մարդ, թերի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 17.4%-ը կամ 1148 մարդ, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողները՝ 2.0%-ը կամ 132 մարդ, ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները՝ 64.7%-ը կամ 4270 մարդ, հիմնական ընդհանուր կրթություն ունեցողները՝ 8.3%-ը կամ 547 մարդ, տարրական կրթություն ունեցողները՝ 0.9%- ը կամ 59 մարդ:

Գծապատկեր 10. Զբաղվածության ոլորտի վերլուծությունը ըստ տարիքի



Աղբյուրը՝ Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Զբաղվածության ոլորտի վերլուծությունը ըստ տարիքի 2013-2015թթ. http://armstat.am/file/article/6.trud_2016_1.pdf

75. Գծապատկերից նկատվում է, որ 2015թ.-ին գործազուրկների թիվը՝ ըստ տարիքի ավելացել է Հայաստանի Հանրապետությունում և ՀՀ Գեղարքունիքի մարզում: 2015թ.-ին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը ՀՀ-ում կազմել է 77004 մարդ, ՀՀ Գեղարքունիքի մարզում 6601 մարդ, որը կազմում է հանրապետությունում գործազուրկների ընդհանուր թվի 8.5%-ը, իսկ ՀՀ Տավուշի մարզում կազմել է 5220 մարդ, որը կազմում է հանրապետությունում գործազուրկների ընդհանուր թվի 6.7%-ը: Գործազուրկների թվում 16-30 տարեկանները կազմում են 26.2%, 31-54 տարեկանները՝ 61.6%, 55-ից բարձր տարիքի անձինք՝ 12.2%: Ըստ տարիքային խմբերի մեծ է միջին տարիքի գործազուրկների մասնաբաժինը:

Աղյուսակ 15. ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության գենդերային կազմի դինամիկան, ըստ զբաղվածության 2011-2014թթ

(%)

	2011		2012		2013		2014	
	կին	*տղամարդ*	կին	*տղամարդ*	կին	*տղամարդ*	կին	*տղամարդ*
Զբաղվածներ	49.2	50.8	49.31	50.69	49.42	50.58	49.54	50.4
Գործազուրկներ	48.4	51.6	31.9	68.1	54.5	45.5	38.7	61.3

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Զբաղվածության ոլորտի վերլուծությունը ըստ գենդերային կազմի 2011-2014թթ. http://armstat.am/file/article/6.trud_2016_1.pdf

76. Ըստ վերը բերված աղյուսակի նկատվում է, որ 2011-2014 թվականների ընթացքում զբաղված տղամարդկանց թվաքանակը նվազել է, իսկ կանանց

զբաղվածությունը աճել: Նույն ժամանակահատվածում գործազուրկ տղամարդկանց թվաքանակը աճել է, իսկ կանանց թվաքանակը նվազել է:

Գծապատկեր 11. Տղամարդկանց և կանանց զբաղվածությունը, ըստ տարիների



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Զբաղվածության ոլորտի վերլուծությունը ըստ սեռերի 2011-2014թթ. http://armstat.am/file/article/6.trud_2016_1.pdf

77. Համաձայն գծապատկերի ՀՀ Գեղարքունիքի մարզում նկատվում է ըստ տարիների կանանց զբաղվածության տոկոսային աճ, իսկ տղամարդկանց մոտ կայուն դինամիկա:

Աղյուսակ 16. Աշխատուժի առաջարկը ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2015թ. դեկտեմբեր

(ամսվա վերջի դրությամբ)

	Աշխատանք փնտրողներ		*նրանցից՝գործազուրկներ*	
	ընդամենը, *մարդ*	*նրանցից՝* երիտասարդներ	ընդամենը, *մարդ*	*նրանցից՝* երիտասարդներ
Ընդամենը	88.928	21.962	77.004	19.007
ք. Երևան	16.760	2.633	14.426	2.158
Արագածոտն	4.757	1.139	3.460	868
Արարատ	6.345	1.445	5.637	1.278
Արմավիր	5.803	1.510	4.802	1.322
Գեղարքունիք	**7.305**	**1.836**	**6.601**	**1.729**
Լոռի	11.159	2.899	10.728	2.775
Կոտայք	8.801	2.042	7.478	1.784
Շիրակ	15.392	4.806	12.909	3.908
Սյունիք	4.860	1.143	4.625	1.066
Վայոց ձոր	1.830	477	1.118	301
Տավուշ	5.916	2.032	5.220	1.818

Աղբյուր՝ Ազգային վիճակագրական ծառայության "Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին" Երևան 2016թ. http://armstat.am/file/article/6.trud_2016_1.pdf

78. Գործազուրկների թվաքանակում մեծ թիվ են կազմում էներգետիկները, մանկավարժները, տնտեսագետները, արվեստի և դիզայնի մասնագետները և այլն:

79. Մարզում հիմնական զբաղվածությունը գյուղատնտեսության, առևտրի, սպասարկման, մասամբ նաև պետական կառավարման, կրթության, առողջապահության ոլորտներում է.

1) աշխատանքային բարձր միգրացիան,
2) մարզի աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության բարձր մակարդակը,
3) թաքնված զբաղվածությունը,

4) երիտասարդների զբաղվածության ցածր մակարդակը,
5) գյուղական երիտասարդների թերզբաղվածությունը,
6) մարզում մասնագետների՝ բժիշկների թափուր աշխատատեղերի առկայություն՝ տարածաշրջանում մասնագետների բացակայության պատճառով:

3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

80. ՀՀ Գեղարքունիքի մարզը հանդիսանում է հստակ արտահայտված ագրարային մարզ: 2015թ. տվյալներով մարզի գյուղատնտեսական արտադրությամբ է գերազանցում հանրապետական միջին ցուցանիշները՝ շուրջ 2.5 անգամ: Մարզը բոլոր այլ ոլորտներում զիջում է հանրապետության միջին ցուցանիշներին: 2015թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները հանրապետությունում համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

1) արդյունաբերություն՝ 2.2 %,
2) գյուղատնտեսություն՝ 19.1 %,
3) շինարարություն՝ 2.7 %,
4) մանրածախ առևտուր՝ 1.7 %,
5) ծառայություններ՝ 0.8 %:

81. Մարզի գյուղատնտեսությունը կարևոր նշանակություն ունի հանրապետության համար: Մարզում արտադրվում է հանրապետությունում արտադրվող հացահատիկի 20.3%-ը և կարտոֆիլի շուրջ 50%: 2011-2015թթ. մարզում արձանագրվել է հացահատիկի և կարտոֆիլի բերքատվության աճ:

82. ՀՀ Գեղարքունիքի մարզի անասնաբուծության հիմնական ուղղվածությունը կաթի և մսամթերքի արտադրությունն է: Դիտարկված հինգ տարիների ընթացքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը դինամիկ ավելացել է, բարձրացել է կենդանիների մթերատվությունը, որը հետևանք է կենդանիների ցեղի բարելավման, կերակրման ու խնամքի նոր տեխնոլոգիաների կիրառման՝ այսպես կաթնատվությունը աճել է շուրջ 5%-ով, իսկ մսատվությունը շուրջ 25%-ով:

83. ՀՀ Գեղարքունիքի մարզի աշխատատեղերի շուրջ 68%-ը ապահովում է գյուղատնտեսության ոլորտը:

84. Բացի գյուղատնտեսությունից մարզի կարևոր ոլորտներ են հանդիսանում նաև հանքարդյունաբերությունը և զբոսաշրջությունը: Հանքարդյունաբերությունը հիմնականում իրականացվում է Սոթք համայնքում՝ «ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից:

85. Մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալային մասնաբաժինը 2011-2016 թվականներին աճել է շուրջ 20%-ով, սակայն դա չի ունեցել որոշիչ բնույթ և մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալները մնում են միջին հանրապետական ցուցանիշից շուրջ 2.5 անգամ ցածր:

86. Հանքարդյունաբերության ոլորտում շահագործվում է 28 հանքավայրեր, որից՝ մեկ մետաղական (Սոթքի ոսկի), մեկ հանքային ջուր («ՍԵՎԱՆ» հանքային ջրերի գործարան), երկու ածխաթթվային հանքային ջրի (կորզվում է ածխաթթու գազ, մեկ քաղցրահամ ջուր, մեկ մերգելային կրաքար («Հրազդան ցեմենտ», 12 քարի, 6 ավազ, ավազակոպիչներ, մեկ գիպսաքար, երկու հրաբխային խարամ և մեկ տորֆ՝ Մասրիկի տորֆ), որոնք ապահովում են 675 ուղղակի աշխատատեղեր:

87. Ներկայումս մարզի տարածքում 3 մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված է երկրաբանական ուսումնասիրության թույլտվություններ, որոնց ժամկետների ավարտվելուց և պաշարների հաստատվելուց հետո հանքավայրերը կշահագործվեն, որի արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր:

88. Տարիներ շարունակ հանրապետության տարբեր շրջաններ (հատկապես ջերմոցային տնտեսություններ ունեցողները) օգտագործել և օգտագործում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Տորֆավան համայնքում գտնվող հանքավայրի տորֆը՝ որպես բնական անփոխարինելի պարարտանյութ:

89. Այժմ էլ հողօգտագործողները կարող են օգտագործել այդ շատ օգտակար և մատչելի պարարտանյութը: Ցանկալի կլինի, որ հողօգտագործողը նախօրոք լաբորատոր ստուգման ենթարկի իր հողը, ճշտելու համար տորֆի անհրաժեշտ քանակությունը:

90. Մարզի զբոսաշրջությունը հիմնականում կենտրոնացած է Սևանա լճի շրջակայքում և, որպես կանոն, կրում է խիստ արտահայտված սեզոնային բնույթ: Այստեղ գործում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, որոնք ապահովում են 524 սեզոնային աշխատատեղ:

91. Մարզում գործող հիմնական կազմակերպությունները դասակարգվում են փոքր և միջին կազմակերպությունների դասին, սակայն մարզում է գործում նաև հանքահումքային արդյունաբերության մեջ մեծ կշիռ ունեցող «ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ-ն, որը մասնագիտացված է թանկարժեք մետաղների հանքարդյունահանմամբ, վերամշակմամբ և հանդիսանում է հանրապետության խոշոր կազմակերպություններից մեկը:

92. Մարզից հիմնականում արտահանվում է հանքարդյունաբերության արտադրանքը և գյուղատնտեսական արտադրանքը: Արտահանման ծավալները 2011 թվականին կազմել է 31 մլն ԱՄՆ դոլար, 2014 թվականին՝ 59 մլն ԱՄՆ դոլար, որոնք համապատասխանաբար կազմել են հանրապետության արտահանման 2.38%-ը և 3.9%-ը: 2015թվականին արտահանման ծավալները նվազեցին մինչև 19.5 մլն ԱՄՆ դոլար, կազմելով հանրապետության արտահանման 1.3%-ը: Արտահանման ծավալների նվազումը պայմանավորված է հանքարդյունաբերության արտադրանքի միջազգային գների անկումով, պատրաստի արտադրանքի շուկայում (Ռուսաստան, ԱՊՀ այլ երկրներ) գնողունակության անկումով և այլ սուբյեկտիվ պատճառներով: Մարզի ներմուծման ծավալները ունեն հստակ արտահայտված նվազման տենդենց: 2011 թվականին ներմուծման ծավալը կազմել է 71 մլն ԱՄՆ դոլար, կամ հանրապետության ներմուծման 1.8%-ը, որը մինչ 2014 թվականը նվազեց հասնելով 67.5 մլն ԱՄՆ դոլարի, կամ հանրապետության ներմուծման 2.3%-ը, իսկ 2015 թվականին այս թիվը կազմել է 51 մլն ԱՄՆ դոլար, կամ ընդհանուր ներմուծման 1.6%-ը:

93. Մարզում գործող 12 փոքր ՀԷԿ-երը արտադրում են մոտ 82.7 մլն.կվտժ էլեկտրաէներգիա, որը կազմում է Հանրապետությունում փոքր ՀԷԿ-երի կողմից արտադրված էներգիայի մոտ 8.6%-ը:

94. Զբոսաշրջություն: ՀՀ Գեղարքունիքի մարզի զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարության նախադրյալներն են՝ ձեռնարկատիրական գործունեության և ներդրումների, կայուն ու ապահով, զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային և բնական ռեսուրսներով հարուստ տարածաշրջան: Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը և Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտալ խորհուրդ համագործակցության շրջանակներում 2015թվականին Սևանի թերակղզու հարակից տարածքում տեղադրվել է շարժական զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակ, որի նպատակն է տուրիստներին ինֆորմացիայի տրամադրում և մասնակցության ապահովում Հայաստանի տարբեր քաղաքներում իրականացվող տուրիզմի խթանմանն ուղղված միջոցառումներին: Ստեղծվել է «Համագործակցության զամբյուղներ», որը ներառում է մարզի տարբեր քաղաքների տեղական արտադրանքը և նպատակ է հետապնդում արժևորել դրանք և վաճառքից ստացված միջոցներով ապահովել զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակի գործունեությունը:

95. Մարզի տարածքում գործում են 57 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ հյուրանոցային համալիրներ, հյուրանոցային քոթեջներ, քարե և փայտե տնակներ, հյուրընկալության ընտանիքներ և այլն:

3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ,ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ

96. 2015թ. ՀՀ Գեղարքունիքի մարզում գործել է 42 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 3214 սանով: Մեկ բնակչի հաշվով նախադպրոցական հաստատությունների ապահովվածությունը ՆՈՒՀ-ում 20-25%-ով ավելի ցածր է, քան միջին հանրապետական ցուցանիշը: Մարզի մեկ բնակչի հաշվով երեխաների հաճախելիությունը ՆՈՒՀ շուրջ 2 անգամ ավելի ցածր է քան միջին հանրապետական ցուցանիշը, ցածր է նաև մանկավարժներով ապահովվածությունը:

97. Մարզում գործում են 126 դպրոցներ, այս թիվը 2012-2015թթ. մնացել է անփոփոխ: Մարզի աշակերտների թիվը ունի նվազման աննշան տենդենց: 2011թվականին ընդհանուր աշակերտների թիվը կազմել է շուրջ 33135, կամ հանրապետության ընդհանուր աշակերտների թվի 8.7%-ը, իսկ 2015 թվականին՝ 29.1 հազար, կամ ընդհանուր աշակերտների 8.0%-ը: Մարզում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը 2011 թվականին եղել է 9.2, իսկ 2016 թվականին 8.6:

98. 2017 թվականի դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում է ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող մեկ (1) նախնական (արհեստագործական) և յոթ (7) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնցից 3-ում իրականացվում են նաև նախնական (արհեստագործական) կրթական ծրագրեր: Մարզում նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների թիվը 2015-2016 ուսումնական տարում կազմել է 499, կամ հանրապետության ուսանողների 7.2%-ը, իսկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում 1234, կամ հանրապետության համանման ուսանողների շուրջ 5%-ը: Մարզում գործում է 2 ԲՈՒՀ, որոնցում 2015 թվականին ընդունված ուսանողների քանակությունը կազմել է՝ 244, իսկ 2013թ.՝ 377 ուսանող:

Գծապատկեր 12. ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող 2 ԲՈՒՀ-երի շրջանավարտների թվաքանակը 2011-2015թթ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների թվաքանակը 2011-2015թթ. http://armstat.am/file/doc/99500843.pdf

99. 2011-2015թթ. ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող 2 ԲՈՒՀ-երում ավարտել են 2253 շրջանավարտներ, որոնց շուրջ 20%-ն աշխատում է մարզում, իսկ շուրջ 60%-ը աշխատանք չունի: Մնացած 20%-ը աշխատանք չունենալու պատճառով արտագաղթել է:

100. ՀՀ Գեղարքունիքի մարզում ստեղծվել է նաև տարեցների համար ուսումնական կենտրոն: Զբաղվածության տարածքային կենտրոններում մասնագիտական վերապատրաստումներ են անցել 78 մարդ: 2015թ. դրությամբ մարզում տարրական կրթություն ունեն 8086 մարդ, որը կազմում է բնակչության 3.5%-ը, հիմնական կրթություն ունեն 21170 մարդ՝ 9.0 %-ը, միջնակարգ կրթություն ունեն 95513 մարդ՝ 41%-ը,

միջնակարգ մասնագիտական կրթություն ունեն 28330 մարդ՝ 12.2%-ը, բարձրագույն կրթություն ունեն 30687 մարդ՝ 13.2%-ը: Մարզի բնակչության զգալի մասը ունի միջնակարգ կրթություն՝ 41%:

Գծապատկեր 13. ՀՀ Գեղարքունիքի մարզի առկա բնակչության կրթական մակարդակը



Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության Կրթության բաժին

101. Մարզի որոշ հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա են կապիտալ վերանորոգման, շուրջօրյա ջրամատակարարման, կոյուղով, խաղահրապարակներով, մարզադահլիճներով և ջեռուցման կենտրոնացված համակարգերով ապահովման խնդիրները, որոնք բացասաբար են անդրադառնում երեխաների և դեռահասների առողջության վրա: Մարզի դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում գործում են կենտրոնացված ջեռուցման համակարգեր, բացառությամբ՝ Սևանի ավագ դպրոց, Սևանի թիվ 1, 2, 3, 4, 5, 6 դպրոցները, Նորաշեն, Զովաբերի, Վարսերի, Չկալովկայի, Սեմենովկայի, Ճամբարակի թիվ 4, Այգուտի միջնակարգ, Կալավանի և Բարեպատի, Անտառամեջի, Դպրաբակի, Դրախտիկի, Աղբերքի, Շորժայի, Արտանիշի միջնակարգ դպրոցներում, Զիլի, Գագարինի, Մարտունու թիվ 2, 3, 4, Վերին Գետաշեն, Երանոսի նախադպրոցական ուսումնական հաստատությունները ունեն վառարանային ջեռուցում:

3.10.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ

102. ՀՀ Գեղարքունիքի մարզում տնային տնտեսությունների թիվը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 75520, որից Գավառ՝ 17001, Սևան՝ 11095, Ճամբարակ՝ 4618, Մարտունի՝ 29577 և Վարդենիս՝ 13229-ը: Մարզի տնային տնտեսությունների 24991 գտնվում է քաղաքային բնակավայրերում, իսկ 50529 գյուղական: Տնային տնտեսությունների ապահովվածությունը բնակմակերեսով գյուղական համայնքներում գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա, իսկ քաղաքային համայնքներում մոտ է հարակից մարզերի ցուցանիշներին և շուրջ 25% գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը:

Աղյուսակ 17. Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2016. հունվարի 1-ի դրությամբ

(մ²)

	Ընդամենը			այդ թվում՝ համայնքներում					
				Քաղաքային			Գյուղական		
	2013	2014	2015	2013	2014	2015	2013	2014	2015
Հայաստանի Հանրապետություն	30.9	31.4	31.6	26.2	26.7	26.9	39.0	39.5	39.8
Գեղարքունիք	**30.8**	**31.2**	**31.4**	**37.8**	**38.6**	**39.0**	**27.7**	**28.0**	**28.2**
Լոռի	38.4	39.7	40.2	37.2	38.5	38.8	40.1	41.6	42.1
Տավուշ	35.9	36.1	36.4	28.5	28.6	28.9	41.3	41.6	41.9

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն: Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 2013 -2015թթ. http://armstat.am/file/doc/99500843.pdf

103. Բազմաբնակարան շենքերում առկա է 12277 բնակարան, որից՝ 11679-ը՝ քաղաքներում: Բազմաբնակարանային բնակելի ֆոնդը կազմում է 1 մլն 157 605 հազ. քմ.: Մարզում բազմաբնակարան շենքերի թիվը քաղաքային համայնքներում կազմում է 488, որից՝ ք. Գավառ՝ 73, ք. Սևան՝ 224, ք. Մարտունի՝ 35, ք. Ճամբարակ՝ 24, ք. Վարդենիս՝ 43: 218 բազմաբնակարան շենքեր ընդգրկված են 6 համատիրությունների մեջ: Մարզի մի քանի բնակավայրերում առկա են ևս 54 բազմաբնակարանային շենքեր (2-4 բնակարաններով):

104. ՀՀ Գեղարքունիքի մարզի տնային տնտեսություններում մեկ շնչին ընկող եկամուտը 2015 թվականին կազմում է 42205 ՀՀ դրամ, որը հանրապետության միջին ցուցանիշի շուրջ 81%-ն է: Բնակչության եկամուտը հիմնականում բաղկացած է վարձու աշխատողների աշխատավարձից՝ 34%, թոշակներից՝ 20%, այլ եկամուտներից 20% և հավասարաչափ գյուղատնտեսության ու տրանսֆերտներից ստացված եկամուտից՝ 26%: ՀՀ Գեղարքունիքի մարզում 2012 թվականին աղքատության մակարդակը նվազել է 35.5%-ից հասնել է 32.1%-ի, այսպիսի նվազումը նկատվում է նաև ամբողջ հանրապետությունում՝ 32.4%-ից հասնելով 29.8%-ի: Աղքատության մակարդակով մարզը զիջում է հանրապետության միջին ցուցանիշին: Մարզը ծայրահեղ աղքատության մակարդակով գտնվում է ավելի բարենպաստ պայմաններում, 2015թ. հանրապետության ծայրահեղ աղքատների թիվը կազմում է 2%, իսկ մարզում այդ թիվը կազմում է 1.3%: ՀՀ Գեղարքունիքի մարզում անօթևան ընտանիքների թիվ հասնում է շուրջ՝ 37-ի:

105. Ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների քանակը ՀՀ Գեղարքունիքի մարզում տարեց տարի ավելանում է: Այդ ընտանիքների քանակը գերազանցում է 1 բնակչի հաշվով հանրապետության ցուցանիշը շուրջ 65%, որը գրեթե չի փոփոխվել 2011-2015 թթ. ընթացքում:

106. Մշակութային մատչելիություն: ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում են 171 մշակույթային օջախներ, որից 5-ը հանրապետական ենթակայության են, 2-ը՝ մարզային, 164-ը՝ համայնքային: Մարզի 16 համայնքներում մշակութային օջախներ չկան: Մշակույթի օջախներում աշխատում են 1214 մարդ, հաճախում են 3398 աշակերտ: Մարզում գործում է մեկ դրամատիկական թատրոն, որի այցելուների քանակը տարեկան մոտ է մարզի բնակչության 1%-ին, այն դեպքում, երբ միջին հանրապետական թիվը հասնում է շուրջ 17%: Թատերական ներկայացումների քանակը տարեկան հասնում է 30-ի: Չնայած 2013-2015 թթ. շուրջ 25%-ով աճել է թանգարանների և պատկերասրահների այցելուների քանակությունը, սակայն այն գտնվում է հանրապետական միջինից շուրջ 50 անգամ ավելի ցածր մակարդակի վրա: Մշակույթի տներում և ակումբներում գործում են քարի և փայտի փորագրության, ասեղնագործության, հելյունագործության, գորգագործության, նկարչության, ազգագրական երգի ու պարի և այլ խմբակներ: 2015 թվականին 2011 թվականի համեմատ մշակույթի տներ կամ ակումբներ հաճախողների թվաքանակը ավելացել է 3.2%-ով՝ հիմնականում կազմակերպված միջոցառումների քանակի հաշվին: Բարելավվել է նաև միջոցառումների որակական ցուցանիշները: Նույն

ժամանակահատվածում գրադարանների թվաքանակը պակասել է 5-ով կամ 25.8%-ով, քանի որ մի շարք համայնքում գործող գրադարանները միավորվել են, իսկ որոշ համայնքներում գործող գրադարանները փակվել են՝ գրքային ֆոնդը հանձնելով հանրակրթական դպրոցների գրադարաններին: Մարզի 92 համայնքներից 11-ում գործում են 9 երաժշտական, 6 արվեստի և 3 գեղարվեստի դպրոցներ, որոնցում սովորում են շուրջ 2600 երեխա: 2015 թվականին մարզում գործող գեղագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների 66.7% գտնվում են քաղաքային համայնքներում: Պետական, ազգային և ավանդական տոների, ծեսերի, ուխտագնացությունների և տոնախմբությունների մասնակիցների թիվը տարեկան կազմում է շուրջ 15000 մարդ: Ազգային մշակութային արժեքներին և արվեստին հաղորդակցվելը մատչելի դարձնելու ուղղությամբ կատարվել են մի շարք միջոցառումներ: Մարզի թանգարաններում, պատկերասրահներում հաճախակի կազմակերպվել են բաց դռների օրեր, անվճար համերգներ՝ հանրապետության և մարզի լավագույն կատարողների ու համույթների ուժերով:

107. Մշակույթի ոլորտում մարզում իրականացվող ծրագրերը պայմանավորված են համայնքներում մշակութային կազմակերպությունների համաչափ տեղաբաշխման, նյութատեխնիկական բազայի զարգացման, մշակութային հաստատությունների շենք-շինությունների հիմնանորոգման, մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովման գերակայություններով, որը կբերի մշակույթի ոլորտի շահառուների թվի ավելացմանը:

108. Մարզի առողջապահական համակարգում գործում են 39 առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններ՝ 3 բժշկական կենտրոն, 2 պոլիկլինիկա, 1 ատամնաբուժական պոլիկլինիկա, 1 հիվանդանոց, 1 ծննդատուն, 1 առողջության կենտրոն, 30 ամբուլատորիաներ և առողջության առաջնային պահպանման կենտրոններ (ՊՈԱԿ–ներ):

109. Մարզի ապահովվածությունը բժշկական կադրերով (13.85 բժիշկ 10 000 բնակչի հաշվով) ավելի քան եռակի ցածր է քան միջին հանրապետական ցուցանիշը (43.74 բժիշկ 10 000 բնակչի հաշվով), իսկ միջին բուժանձնակազմ (41.03 մասնագետ 10 000 բնակչի հաշվով) և հանրապետության (58.80 մասնագետ 10 000 բնակչի հաշվով):

110. Հիվանդանոցային մահճակալների քանակով մարզը կրկին զիջում է միջին հանրապետական ցուցանիշին, մարզում առկա է 32.36 մահճակալ 10 000 բնակչի համար, հանրապետության 41.79 դիմաց:

111. Վերջին տարիներին աճել է արտահիվանդանոցային բժշկական օգնության դիմելու մակարդակը, միջինում 3.2 դիմում մեկ բնակչից հասնելով մինչև 3.4: Միևնույն ժամանակ այս մակարդակը շարունակում է ավելի ցածր մնալ, քան միջին հանրապետական ցուցանիշը, որը կազմում է միջինում 4.0 դիմում մեկ բնակչի հաշվով:

112. Մասնագետների բացակայությունը ստիպում է մարզի բնակիչներին խնդիրների առաջացման դեպքում այցելել մայրաքաղաքի հիվանդանոցներ, որը ստեղծում է հավելյալ ծախսեր և մատչելի չէ մարզի բոլոր բնակչության համար: Մարզում մինչ 2025 թվականը անհրաժեշտ է շուրջ 250 հավելյալ բժիշկներ:

113. Մարզի բոլոր՝ 46 նախադպրոցական հաստատությունները ապահովված են բժշկական ծառայությունով՝ յուրաքանչյուր հաստատությունում աշխատում է մեկ բուժքույր, իսկ ուսումնական հանրակրթական ուսումնական 125 հաստատությունները սպասարկվում են տվյալ համայնքի սպասարկող բժշկական հաստատությունների կողմից ամրագրված աշխատակիցների կողմից: Ուսումնական հաստատություններից ոչ բոլորը ունեն առաջին բուժօգնության իրականացման համար հատկացված սենյակներ:

3.11.ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

114. Օդի որակ*:* Մարզի օդային ավազանը գտնվում է բավականին բարվոք վիճակում, 2015 թվականի ընթացքում օդային ավազանի դիտարկումներ կատարվել է Մարտունի քաղաքում, որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները, որոնց միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Մարզի օդային ավազան տարեկան արտանետվում են շուրջ 2.9 հազ. տոննա աղտոտող նյութեր, որը կազմում է Հանրապետության ընդհանուր գրանցված արտանետումների 2.25%-ը կամ գրեթե 3 անգամ փոքր է մեկ անձի հաշվով միջին Հանրապետական ցուցանիշից: Տարածքի հաշվարկով այս օդային ավազան արտանետումների մակարդակը քիչ է հանրապետության միջինից շուրջ 6.3 անգամ:

115. Մարզի տարածքում գործող կազմակերպությունները չեն իրականացնել վնասակար նյութերի որսման համար գրեթե ոչ մի գործողություն (որսվում է միայն արտանետումների 0.1%-ը կամ շուրջ 3 տոննա): Օդային ավազանում հայտնաբերված փոշու քանակությամբ մարզը գտնվում է բարվոք վիճակում, այս ցուցանիշը միջին հանրապետական մեկ շնչի հաշվով ցուցանիշից փոքր է շուրջ 3 անգամ:

116. Ջրի որակ*:* Անկախ այն հանգամանքից, որ արտանետվող կեղտաջրերի մակարդակը 2013-2015թթ. կրճատվել են, սակայն մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում: Ջրի որակի ուսումնասիրությունները կատարվել են Սևանա լիճ թափվող 10 խոշոր գետերից (Ձկնագետ, Մասրիկ, Սոթք, Կարճաղբյուր, Վարդենիս, Մարտունի, Արգիճի, Ծակքար, Շողվակ և Գավառագետ) վերցված նմուշներով: Ձկնագետ, Կարճաղբյուր, Արգիճի, Շողվակ և Սոթք գետերի ջուրը «լավ» որակի է: Մնացած բոլոր գետերի գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս) կամ «անբավարար» (4-րդ դաս):

117. Սևան քաղաքում անհրաժեշտ է կառուցել կեղտաջրերի մաքրման կայան:

118. Սևանա լիճ*:* Սևանա լճի հիդրոքիմիական ուսումնասիրությունների արդյունքում լճի թթվածնային ռեժիմն եղել է բավարար, լճի բնական կենսագործունեության համար՝ դիտվելով թույլատրելի նորմի սահմանում:

119. Սևանա լճից վերցված փորձանմուշներում ՍԹԿ-ն գերազանցվել է՝ քրոմինը՝ 1.2-3.9 անգամ, մագնեզիումինը՝ 1.2-1.7 անգամ, վանադիումինը՝ 2.9-5.9 անգամ, սելենինը՝ 1.2-5.0 անգամ: Հիմք ընդունելով լճի ջրի քիմիական որակի բազմամյա ուսումնասիրությունների տվյալները այսպիսի քանակությունը լճի բնական առանձնահատկությունն է և չի համարվում աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվել են համապատասխան ՍԹԿ-ների սահմաններում: Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ափամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետբյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքներից արդեն մաքրվել է շուրջ 2200 հեկտար, ջրածածկման ենթակա 20կմ ճանապարհներից վերականգնվել է 2կմ-ը, տեղափոխվել է Ձոլաքարի ջրհան կայանը, սեփականատերերի կողմից ապամոնտաժվել և տեղափոխվել է 320 միավոր շինություն: Մաքրման աշխատանքները շարունակվում են:

120. Հողի որակ: Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, առկա են շատ որակյալ հողեր և նպատակահարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է, կազմում է շուրջ 10000 հեկտար: Այդ հարթ տարածությունները ծովի

մակերևույթից ունեն 1900-2200 մ բարձրություն: Սևանա լճի հարավային և արևմտյան առափնյա հարթ տարածությունները բնութագրվում են լեռնատափաստանային բերրի սևահողերով, իսկ համեմատաբար բարձրադիր մասերը՝ լեռնամարգագետնային հողերով:

121. Բնության հատուկ պահպանվող տարածքներ: Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման ու պահպանման նպատակով 1978թ. ստեղծվել է «Սևան» Ազգային պարկը, որի տարածքում կան 4 արգելոցներ և 2 արգելավայրեր:

1) **«Նորաշենի»** արգելոց: Արգելոցի նպատակն է ապահովել այստեղ բնադրող միակ էնդեմիկ թռչունի՝ հայկական որորի բնականոն ապրելակերպն ու վերարտադրությունը:
2) **«Լիճք-Արգիճի»** արգելոց: Արգելոցի նպատակն է ապահովել Լիճքի հանքային աղբյուրների, Արգիչի և Լիճք գետերի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների ջրաճահճային և ջրային բուսականության, թռչունների բնադրավայրի պահպանությունը, ինչպես նաև արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների՝ Սևանի իշխանի, Սևանի կողակ և Սևանի բեղլուի ձվադրումն ու զարգացումը:
3) **«Գիլլի» արգելոց:** Արգելոցի նպատակն է ապահովել Մասրիկ և Գեղամասար գետերի գետաբերանային հատվածների պահպանությունը՝ արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների ձվադրման և զարգացման համար, ինչպես նաև հարակից ճահճուտների պահպանությունը, որպես թռչունների բնակավայր:
4) **«Արտանիշի »արգելոց:** Արգելոցի նպատակն է ապահովել Արտանիշ թերակղզու մինչսառցային ժամանակաշրջանի բազմազան ռելիկտային բուսականության, գիհու նոսր անտառների և տափաստանների, ինչպես նաև որպես հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, այծյամ, վարազ, բեզոարյան այծ, ազնվացեղ եղջերու և այլն) միգրացիայի միջանցքի պահպանությունը:
5) **«Գավառագետի» արգելավայր**: Արգելավայրի նպատակն է ապահովել Գավառագետի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների պահպանությունը և Նորատուս թերակղզու ափամերձ հատվածի թռչունների բնակավայրերը, ինչպես նաև արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների ձվադրումն ու զարգացումը:
6) **«Գիհի-կաղնուտային ռելիկտային»** արգելավայր: Արգելավայրի նպատակն է ապահովել Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի վրա տարածվող գիհու և կաղնու ռելիկտային բնական նոսր անտառների պահպանությունը:
7) **«Գիհու նոսրանտառային արգելավայր»** հիմնադրվել է 1958թ., որի նպատակը Գիհի բազմապտուղ, Գիհի գարշահոտ և Գիհի երկարատերև տեսակների գերակշռությամբ նոսր անտառների պահպանությունն է:
8) **«Գետիկի պետական արգելավայր»** Հիմնադրվել է 1971թ. լեռնային անտառների, հազվագյուտ և արժեքավոր կենդանիների (այծյամ, գորշ արջ, Կովկասյան մարեհավ) պահպանության համար:

122. Բնության հուշարձաններ - 15 բնության հուշարձաններ, որից 7-ը՝ երկրաբանական, 6-ը՝ ջրաերկրաբանական, 1-ը՝ ջրագրական և 1-ը՝ կենսաբանական:

123. Կենսաբազմազանություն.

1) **Բուսական աշխարհ** - Կան անոթավոր բույսերի 1619 տեսակ, 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Շուրջ 60 բուսատեսակներ համարվում են դեղաբույսեր և 100–ը ուտելի, կան նաև 267 տեսակի սնկեր, որից 100 տեսակը ուտելի են և 24 տեսակը թունավոր:
2) **Կենդանական աշխարհ** - Մարզի տարածքում հաշվարկվում են 43 տեսակի փափկամարմիններ, 639 տեսակի հոդվածոտանիներ, երկարաչանչ խեցգետին, Սևանի էնդեմիկ իշխանը իր 4 տարատեսակներով, սիգ ձուկը, էնդեմիկ ձկներից

Սևանի բեղլուն և Սևանի կողակը, պատահաբար լիճ է ներթափանցել նաև լճաձածանը: Հանդիպում են 4 տեսակի երկկենցաղներ, 16 տեսակի սողուններ, հանդիպում են թռչունների 267 տեսակ, կաթնասունների 44 տեսակ:

3) **Կարմիր գրքում գրանցված են՝** կաթնասունների 6 տեսակ, (Բեզուարյան այծ և այլն), 39 թռչնատեսակներ (Հայկական որոր...), սողուններից 2 տեսակ (խայտաբղետ և փոքրասիական մողեսները), ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղլուն և Սևանի կողակը, հոդվածոտանիներից կապտաթիթեռը գրանցված է միջազգային միության Կարմիր գրքում:

124. Մարզի բնապահպանական հիմնախնդիրները հիմնականում կապված են Սևանա լճի և նրա էկոհամակարգերի վերականգնման և պահպանման հետ:

125. Սոթքի ոսկու հանքավայրի շահագործման արդյունքում շրջակա միջավայրի բնական բաղադրիչների (հատկապես հողերի և մակերևութային ջրերի) վրա դրսևորվող բացասական ազդեցությունների ուսումնասիրությունն ու կանխարգելման միջոցառումները:

126. Սևանա լիճ թափվող գետերի վրա կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման և կեղտաջրերի մաքրման կայանների, կազմակերպությունների կողմից նախնական մաքրման համակարգերի բացակայությանը, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնանորոգման (ռեկուլտիվացիայի ծրագրերի իրականացումը անհրաժեշտ է ջրային ռեսուրսների և հողերի հետագա աղտոտումը կանխարգելելու և բնական էկոհամակարգերը վերականգնելու համար, ԿՄԿ վերակառուցումը կնվազեցնի ջրային ավազանների վրա աղտոտման ճնշումը) հիմնախնդիրները:

Գծապատկեր 14. 2011-2015թթ. լիճ բաց թողնված մանրաձուկ



Գծապատկեր 15. ձկնային պաշարների քանակը (հազար հատ)



Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության Բնապահպանության բաժին

127. Վերականգնվող էներգետիկա: Մարզի համայնքների էներգետիկ խնդիրները լուծելու համար նպատակահարմար է ծրագրերի, հովանավորների ու պետության աջակցությամբ նպաստել արևային էներգիայի ու հողմակայանների միջոցով էլեկտրական էներգիայի արտադրությանը:

1) **Քամի:** Եվրամիության TACIS-ի «Օժանդակություն՝ Հայաստանի էներգետիկ քաղաքականությանը» ծրագրի շրջանակներում կատարվել են մոնիթորինգային աշխատանքներ Սևանի Սեմյոնովկա լեռնանցքում և կազմվել է նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումը 35Մվտ գումարային դրվածքային հզորությամբ հողմաէլեկտրակայանի կառուցման համար: «Zod Wind» մասնավոր ՓԲԸ-ն ավարտել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի լեռնանցքի տարածքում հողմաէներգետիկ ծրագրի մոնիթորինգային աշխատանքները: Վերջինս բանակցություններ է վարում տարբեր կազմակերպությունների հետ 20ՄՎտ գումարային դրվածքային հզորությամբ «Զոդ» հողմաէլեկտրակայանի կառուցման նպատակով ներդրումներ ներգրավելու ուղղությամբ: Մարզի Դդմաշեն, Ծաղկունք, Զովաբեր համայնքներում

բանակցություններ են տարվում օտարերկրյա ներդրողների միջոցով կառուցել վերականգնվող էներգիայի կայաններ (հողմաէլեկտրակայաններ):

2) **Արև:** Կլիմայի ներդրումային հիմնադրամների «Ցածր եկամուտ ունեցող երակներում վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի» (Program for Scaling up Renewable Energy Program for Low Income Countries/SREP (Ծրագիր)) շրջանակներում հաստատվել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի ներդրումային ծրագիրը, որի համաձայն ծրագրի համապատասխան միջոցները տրամադրվում են արևային տեխնոլոգիաների կիրառմամբ մինչև 100ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայաններ կառուցելու նպատակով: Անհրաժեշտ ռեսուրսը հաստատելու համար իրականացվում է արևային էներգիայի մոնիտորինգ և պատրաստվում է արևային ատլաս, այդ թվում ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մեծ Մասրիկ» և «Գագարին» համայնքների վարչական սահմաններում տարվա ընթացքում արևային օրերի թվի գերակշռող քանակը հնարավորություն է տալիս հիմնել արևային էներգիայով աշխատող կայաններ: Մարզի Վարդենիսի տարածաշրջանում Ֆրանսիական «Արփի սոլար» կազմակերպության միջոցով տեղակայվել են արևային էներգիայով աշխատող 10 ջրատաքացուցիչներ:

3) **Հիդրոէներգետիկա:** 2017թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում էլեկտրաէներգիա են արտադրել 12 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ տարեկան մոտ 82.7մլն.կվտժ (Հանրապետությունում փոքր ՀԷԿ-երի կողմից արտադրված ընդհանուր էներգիայի մոտ 8.6%) և 29851կՎտ ընդհանուր հզորությամբ, սակայն ելնելով Սևանա լճի էկոհամակարգի և էնդեմիկ ձկնատեսակների պահպանության խնդիրներից ՀՀ կառավարության 04.08.2011թ. N30 որոշմամբ փոքր ՀԷԿ-երի զարգացման սխեմայի ցանկից հանվել է Սևանա լճի ավազան բաժինը, նպատակ ունենալով դադարեցնել Սևանա լճի ավազանում փոքր ՀԷԿ-երի կառուցումը:

4) **Երկրաջերմային:** Երկրաջերմային էներգետիկայի ոլորտում ուսումնասիրություններ են կատարվում մարզի «Գռիձոր» հարթակում, որի համալիր հետազոտությունները և հետախուզումը ներկայումս ընթացքի մեջ են: Ֆինանսավորումը կատարվում է Համաշխարհային բանկի և Գենոֆոնդ հիմնադրամի լրացուցիչ դրամաշնորհային ֆինանսավորումով:

128. Էներգախնայողություն: ՀՀ Գեղարքունիքի մարզում ՀՀ կառավարությունը մի շարք միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ համատեղ (Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (ՀՎԷԷՀ), ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ, ՎիվաՍել ՄՏՍ և այլն) հանրային նշանակության օբյեկտներում իրականացրել և շարունակում է իրականացնել էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում նախատեսվում է էապես կրճատել վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումները մթնոլորտ:

129. ՀՎԷԷՀ «Էներգախնայողության ծրագրի» շրջանակներում իրականացված աշխատանքներ՝

1) Գավառի թիվ 5 դպրոցում էներգախնայողության միջոցառումներ,
2) Լճաշենի միջնակարգ դպրոցում էներգախնայողության միջոցառումներ,
3) Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցում էներգախնայողության միջոցառումներ,
4) «Սևան» քրեակատարողական հիմնարկում էներգախնայողության միջոցառումներ,

130. «Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներ՝

1) Սևան քաղաքի փողոցային լուսավորում (1.08 կմ երկարություն),
2) Գավառ քաղաքի փողոցային լուսավորում (1.5 կմ երկարություն),

131. ՎիվաՍել ՄՏՍ-ի «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներ՝

1) Լիճք, Վահան գյուղերի փողոցային լուսավորում,
2) Ծովագյուղ արևային «էլեկտրական հովիվ:

3.12.ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

132. Հայաստանում տարածքային կառավարումը իրականացվում է մարզպետարանների կողմից: ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը ունի 177 աշխատակից, որոնց 69.5%-ն ունեն բարձրագույն կրթություն, աշխատակիցների 30.5%-ը կանայք են:

Աղյուսակ 18. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ 2016թ.

ՀՀ մարզեր	Մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներ		Մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցների կրթությունը (քաղ.ծառայողներ)		
	Կին	Տղամարդ	Միջնակարգ	միջն.մասնագիտ	բարձրագույն
2016թ.	54	123	5	21	151

Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Անձնակազմի կառավարման բաժին

133. Մարզպետարանի աշխատակազմը ունի 7 վարչություններ, 8 առանձնացված բաժիններ և 5 տարածքային ՍԱՏԳ-ներ, որոնք ևս ունեն բաժինների կարգավիճակ: Բաժինները կազմված են 184 հաստիքներից՝ որից 7-ը թափուր է:

134. Մարզպետարանի միջոցով 2015 թվականին իրականացվել են 8346.5 մլն ՀՀ դրամի ներդրումային ծրագրեր, որից 669.6 մլն դրամը մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծախսերն է, իսկ մնացած ծախսված գումարները՝ 7676.9 մլն դրամը ծախսվել է մարզի մի շարք տարբեր ծրագրերի իրականացման նպատակով, այդ գումարները ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեի հաշվին:

135. Մարզի 92 համայնքներից 55 համայնքապետարաններում ներդրվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ): Համայնքի պաշտոնական համացանցային կայք ունեն 36 համայնք, իսկ 47 համայնք կապը ապահովում է «Mulberry» համակարգի միջոցով:

Աղյուսակ 19. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքապետարանների աշխատակազմերը 2016թ.

ՀՀ Գեղարքունիք մարզ	Համայնքի ղեկավար		Համայնքի ղեկավարի տեղակալ		Համայնքի ավագանու անդամներ		Փաստացի համայնքային ծառայողներ		Համայնքային ծառայողների կրթությունը		
	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	միջնակարգ	միջն. մասնագ	բարձրագույն
2013թ.	3	89	1	73	43	550	142	400	69	189	284
2014թ.	3	89	1	75	43	549	138	378	66	176	274
2015թ.	3	89	1	77	46	547	135	361	62	161	273
2016թ.	3	89	1	77	46	564	130	363	55	168	270

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների համակարգման վարչություն:

136. Ներկայումս գյուղական 87 համայնքներում աշխատում են 377 համայնքային ծառայողներ, այսինքն՝ միջինը մեկ համայնքի հաշվով 4 համայնքային ծառայողներ: Համայնքային ծառայողներից 187-ն ունեն բարձրագույն, իսկ 146՝ միջին մասնագիտական կրթություն: Գյուղական համայնքների ընդհանուր բյուջեի փաստացի կատարված ծախսերը 2015թ. կազմում են 3773.6 մլն ՀՀ դրամ, որից ներդրումային ծախսերը 744.5 մլն ՀՀ դրամ և վարչական ծախսերը 3265.1 մլն ՀՀ դրամ: Գյուղական համայնքների աշխատակազմի պահպանման փաստացի ծախսերը 2015 թվականին կազմել են 1986.4 ՀՀ դրամ:

137. Մարզի քաղաքային համայնքներում աշխատող համայնքային ծառայողների քանակը 116, այսինքն՝ միջինը 23 համայնքային ծառայող մեկ համայնքի հաշվով: Քաղաքային համայնքներում աշխատող համայնքային ծառայողների 83 ունեն բարձրագույն, իսկ 22 միջին մասնագիտական կրթություն: Քաղաքային համայնքների ընդհանուր բյուջեի փաստացի կատարված ծախսերը 2015թ. կազմում են 1769.6 մլն ՀՀ դրամ, որից ներդրումային ծախսերը 187.2 մլն ՀՀ դրամ և վարչական ծախսերը 1691.9 մլն ՀՀ դրամ: Քաղաքային համայնքների աշխատակազմի պահպանման փաստացի ծախսերը 2015 թվականին կազմել են 356.6 ՀՀ դրամ:

138. 2015-2016 թվականներին մարզում իրականացվել են մարզպետարանի և մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի կարողությունների զարգացմանը ուղղված հետևյալ ծրագրեր.

Աղյուսակ 20. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցների 2015-2016թթ. վերապատրաստումների վերաբերյալ

N	Վերապատրաստման ծրագիրը	2015թ.	2016թ.
1	Կազմակերպչական հոգեբանություն	7	8
2	Մարդու իրավունքներ	5	2
3	Էթիկա	1	2
4	Կոռուպցիայի դեմ պայքար	2	1
5	Գենդերային հիմնահարցեր	1	2
6	Ֆինանսների կառավարում և ներքին աուդիտ	4	3
7	Աշխատանքի կազմակերպման հմտություններ	3	2
8	Տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման համակարգում	2	2
9	Աշխատանքի կազմակերպում և ղեկավարում	3	
10	Անձնային և կառավարչական ունակությունների զարգացում	-	4
11	Հանրային կապեր	-	1
12	Գենդերային հիմնահարցեր	3	2
13	Կրթության ոլորտ	3	4
14	Գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտ	5	3
15	Սոցիալական ոլորտ	8	11
	Ընդամենը	47	45

Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Անձնակազմի կառավարման բաժին

139. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներից վերապատրաստված քաղծառայողները արդյունքում ստացել են՝ պետական նմուշի հավաստագրեր և ներկայացրել են մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին:

140. Մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայողներից 2015թ. ընթացքում հերթական վերապատրաստում են անցել «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից 67 համայնքային ծառայողներ և 71 համայնքի ղեկավարներ ու ավագանիներ, ստացել են համապատասխան տեղեկանքներ:

141. 2016թ. ընթացքում հերթական վերապատրաստում են անցել «Մաստեր սթայլ» ՍՊԸ-ի կողմից 40 համայնքային ծառայողներ և ստացել են համապատասխան տեղեկանքներ:

142. Մարզում պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացմանն ուղղված ՏՀՏ միջոցները կիրառվում են էլեկտրոնային գնումների գործընթացում: Ներկա դրությամբ ներառված են մարզպետարանի աշխատակազմում և հինգ քաղաքային համայնքներում՝ Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ: Մարզպետարանի աշխատակազմում կիրառվում է նաև «Քլիենթ-թրեժրի» ֆինանսավորման համակարգը:

143. ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում են Առևտրա-արդյունաբերական պալատը և ՓՄՁ ԶԱԿ-ը, որոնք իրականացնում են աջակցություն սկսնակ գործարարներին և գործող ձեռնարկատիրությամբ զբաղվող սուբյեկտներին, որոնք իրականացրել են տարբեր տեսակի ծրագրեր:

144. ՀՀ Գեղարքունիքի մարզում գրանցված են ավելի քան 60 հասարակական կազմակերպություններ: Նրանցից առավել ակտիվ գործունեություն են իրականացնում մոտ 25-ը, որոնք ծրագրեր են իրականացնում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հետ համագործակցված: Նշված 25 հասարակական կազմակերպությունները 2015-2016թթ. ծրագրեր են իրականացրել հետևյալ ոլորտներում՝

1) 8 հասարակական կազմակերպություններ զբաղվել են մարզի համայնքների սոցիալ-տնտեսական ծրագրերի կազմման և դրանց կյանքի կոչմանն աշխատանքներով, ինչպես նաև իրականացրել են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերի մոնիտորինգներ և մարզպետարանում կազմակերպել արդյունքների քննարկումներ:

2) 6 հասարակական կազմակերպություններ զբաղվել են մարզի համայնքներում կրթական, ներառական բազմաբնույթ ծրագրերի իրականացմամբ, ինչպես նաև ընդգրկվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող մարզային հանձնաժողովում» և պարբերաբար մասնակցել հրավիրվող նիստերին, համատեղ կայացրել որոշումներ:

3) ՔՀԿ ներկայացուցիչները ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հետ համատեղ իրականացրել են հանրային իրազեկման աշխատանքներ, այդ թվում ՀՀ ոստիկանությունը և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը մարզի համայնքներում իրականացրել են «Ընտանեկան բռնության հարցերով ոստիկանության կարողությունների զարգացում» ծրագիրը:

4) ՔՀԿ ներկայացուցիչները 2016 թվականին ընդգրկվել են «ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության ծրագրի» կազմման ոլորտային աշխատանքային խմբերում և համատեղ իրականացնում են ռազմավարության մշակման աշխատանքները:

3.13.ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

145. Սողանքային գոտի: Ճամբարակ, Ձորավանք, Դպրաբակ, գ. Մարտունի, Այգուտ, Կալավան, Թթուջուր, Ավազան, Երանոս համայնքների 84.5 հա տարածքներ:

146. Քարաթափման գոտի: Գավառ, Կարմիրգյուղ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Ծաղկաշեն, Արծվանիստ, Գեղհովիտ, ք. Մարտունի, Ձորագյուղ, Վարդենիկ, Ծովակ, Կարճաղբյուր, Կալավան, Դպրաբակ, Ձորավանք, Այգուտ համայնքներ:

147. Գետերի վարարման գոտի: Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ, Կարմիրգյուղ, Նորատուս, Ծաղկաշեն, Գավառ, Մադինա, Լեռնահովիտ, Ն. Գետաշեն, Մարտունի, Գեղհովիտ, Մ. Մասրիկ, Ծովագյուղ, Ձորավանք, Դպրաբակ, Այգուտ, Մարտունի, Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ համայնքներ:

148. Նշված համայնքներում 2011-2015թթ. կազմվել են աղետների ռիսկերի նվազեցման պլաններ: Առավել վտանգավոր սողանքային գոտիների (Այգուտ համայնք) 35 բնակիչների 2011-2015թթ. ՀՀ կառավարության կողմից տրվել է ֆինանսական աջակցություն՝ ապահով վայրերում բնակարաններ ձեռք բերելու համար:

149. Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պատրաստվածության խնդիրը միշտ պետք է լինի բարձր մակարդակի վրա: Այդ նպատակով անհրաժեշտ է բնակչության համար պարբերաբար կազմակերպել ուսուցողական դասընթացներ և վարժանքներ:

150. Սահմանամերձ վտանգավոր գոտի: Մարզում մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող սահմանամերձ հողատարածքները տեղաբաշխված են Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների 23 համայնքների վարչական սահմաններում և կազմում են շուրջ 7200 հեկտար, որից 340.2 հեկտարը քաղաքացիների սեփականությունն են, իսկ մնացածը համայնքային կամ պետական սեփականության հողեր են:

151. Այդ տարածքները ազգաբնակչության կողմից չեն օգտագործվում, քանի որ գտնվում են սահմանամերձ վտանգավոր գոտում կամ ականապատված:

152. ՀՀ Գեղարքունիքի մարզի սահմանամերձ համայնքների մշտական բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 28374 մարդ, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության 12.2%-ը:

153. ՀՀ Գեղարքունիքի մարզի 23 սահմանամերձ համայնքներից միայն ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ Ճամբարակ և Վահան համայնքներն են ընդգրկվել օգտագործած հողի հարկի, գույքահարկի, էլեկտրաէներգիայի, գազի, ոռոգման ջրի արժեքների դիմաց սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ցանկում: 2015թ. հունվարի 15-ի N 30-Ն որոշմամբ՝ որպես մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանամերձ համայնքների՝ Ճամբարակ և Վահան համայնքներում իրականացվող գործունեությունները ազատվում են հարկերից: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև սահմանամերձ մյուս 21 համայնքների համար արտոնյալ պայմաններ սահմանելու, բնակչության կենսական պայմանները բարելավելու և այլ կարևոր հարցերին:

IV.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT)

154. ՈՒԹԿՀՎ վերլուծությունը ապահովում է զարգացման ոլորտում ներկայիս իրավիճակի ամփոփ նկարագիրը:

Աղյուսակ 21. ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները

Ուժեղ կողմեր / Հնարավորություններ	Թույլ կողմեր / Սպառնալիքներ
1. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	
• Խոշոր արդյունաբերական գործարանների առկայություն	• Մեծ քանակի արտագաղթ և լճացում հատկապես քաղաքային համայնքներից • Բնակչության ծերացման բացասական միտումներ • Բնական պաշարների թերի շահագործում
• ՀՀ մարզերի հետ համեմատած մարզը ունի ամենաշատ արևային օրերի քանակ • Ամենաշատ քաղցրահամ ջրի պաշար հանրապետությունում (Սևանա լճի առկայություն) • Մեծաքանակ հանքային պաշարներ (ոսկի, բազալտ, քրոմիտ, կրաքար, հանքային ջուր) • Աշխատունակ բնակչության մեծ քանակ • Քաղաքային ցանց Սևանի ափամերձ տարածքում (4 քաղաքային համայնքներ) • Ալպյան և ենթալպյան հողերի առկայություն • Սևանա և քաղցրահամ առկա ջրային պաշարների ներուժ հետագա օգտագործման համար • Գավառի օդանավակայանի առկայությունը	• Խիստ բնակլիմայական պայմաններ հատկապես լեռնային տարածքներում (քամի, երկարատև, խստաշունչ ձմեռ). • Սողանքների առկայություն • Սեյսմիկ գոտում գտնվելը • Մեծ քանակի արտագաղթը և լճացումը, հատկապես քաղաքային համայնքներից, ինչպես նաև բնակչության ծերացման բացասական միտումներ
2. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	
• Բնակչության հանրային տրանսպորտի հասանելիություն 80%-ով	
• Տարանցիկ ճանապարհ դեպի ՀՀ Տավուշի և Վայոց Ձորի մարզեր ու Արցախ հանրապետություն ուղևորա և բեռնափոխադրման նպատակով ճանապարհների հասանելիության և մատչելիություն • Ներմարզային ուղևորա և բեռնափոխադրման նպատակով երկաթգծի առկայություն • Ազգային տնտեսական աճ, որը կնպաստի տրանսպորտի արդյունավետ օգտագործմանը	• Տնտեսական վատ իրավիճակ, որը ազդում է ուղևորա և բեռնափոխադրման հոսքի վրա • Այլընտրանքային ճանապարհների կառուցում՝ օրինակ Հյուսիս-Հարավ
3. ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	
• Զարգացած միջպետական ավտոճանապարհների ցանց մարզի բոլոր ուղղություններով • Կեղտաջրերի մաքրման կայանների առկայություն, բացառությամբ Սևան քաղաքից	• Տրանսպորտային ենթակառուցվածքների ֆիզիկական մաշվածություն • Աղբավայրերի ոչ ճիշտ տեղաբաշխում և գործարկում • Սևան քաղաքից կեղտաջրերի մաքրման

• Զարգացած գազիֆիկացված ցանց • Համայնքներում բարելավված ջրամատակարարում	կայանի բացակայություն • Միջհամայնքային և տեղական անմխիթար ճանապարհների առկայություն
• Բարելավող տրանսպորտային և տնտեսական կապեր Արցախի հետ • Երկաթուղային ենթակառուցվածքի առկայություն	• Երկարատև ձմեռ, որի պատճառով քայքայվում են ճանապարհները
4. ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
• Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և եկամտի աճի դրական միտումներ 2014-2015թթ.	• ՀՆԱ-ի ցածր մակարդակ մեկ շնչի հաշվով ՀՀ-ի միջինի հետ համեմատած (64%) • Մեծ կախվածություն գյուղատնտեսական ոլորտից ստացված եկամուտներից • Տրանսֆերտների ցածր մակարդակ մեկ շնչի հաշվով
• Երկրի տնտեսական իրավիճակի բարելավում	• Կլիմայի փոփոխության ազդեցության ավելացում մարզային տնտեսության ՝գյուղատնտեսության վրա
5.ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ	
• Սեզոնային աշխատատեղերի առկայություն զբոսաշրջության ոլորտում ապահովելով հավելյալ զբաղվածություն • Զարգացող զբոսաշրջություն, որը ստեղծում է սեզոնային բազմաթիվ աշխատատեղեր	• Աղքատության բարձր մակարդակ 2015թ (ՀՀ Գեղարքունիքում 32.1%, ՀՀ-ում 29.8 2015թ.) և ծայրահեղ աղքատության (ՀՀ Գեղարքունիքում 1.3 ՀՀ-ում 2.0) • Գործազրկության բարձր մակարդակ հատկապես երիտասարդության շրջանում
• Արտոնությունների օգտագործման դեպքում աշխատատեղերի ստեղծում Ճամբարակում • Զբաղվածության ընդլայնում պետական աջակցությամբ •	• Տնտեսական անկման բարձր մակարդակ
6. ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	
• Զարգացած գյուղատնտեսություն, որը ապահովում է շուրջ 50 000 աշխատատեղ • Զարգացած զբոսաշրջության (Սևանի ավազանի տարածաշրջան) հատկապես ամռանը • Զարգացած հանքարդյունաբերություն (Վարդենիս, Սոթք) • Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճ • ՀՀ Գեղարքունիքի մարզում արտադրվում է հացահատիկի 20.3% և կարտոֆիլի շուրջ 50%-ը	• Գյուղերի մեծ մասում գյուղատնտեսական ոլորտում կիրառվող սահմանափակ գիտելիքներ, արտադրողականություն, հնամաշ տեխնիկա և սեփականաշնորհված հողերի մասնատվածություն • Չօգտագործվող մաշված պոստ ինդուստրիալ տարածքների առկայություն • Չմշակվող գյուղատնտեսական հողատարածություններ • Տնտեսական անկման միտումներ քաղաքային կենտրոններում • Ոռոգելի հողերը կազմում են վարելահողերի ընդամենը 15%-ը
• Ինտենսիվ կառավարական աջակցություն ներդրումների ներգրավման համար • Բնական պաշարները, որոնք հնարավոր է արդյունահանել • Զբոսաշրջության զարգացման հնարավորություն հիմնված մշակույթային արժեքների վրա (Մաքենիսի վանական համալիր,	• Բնակլիմայական պայմանների բացասական ազդեցությունը գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների վրա • Վարելահողերը գտնվում են ծովի մակարդակից 1900-2200 մետր բարձրության վրա

Նորատուսի խաչքարերի առկայություն) • Նպաստավոր բնակլիմայական պայմաններ անասնապահության և բուսաբուծության զարգացման համար, ինչպես նաև առկա 81 725 հեկտար վարելահողեր • Առկա 181000 հեկտար արոտավայրերը և 35600 հեկտար խոտհարքները, որոնք հնարավորություն են տալիս մարզում արտադրել 28000 տոննա միս և 137000 տոննա կաթ	
7.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ	
• Նախակրթական, տարրական և միջնակարգ կրթության բարձր մատչելիություն • Որակավորման բարձրացման դասընթացների և մեծահասակների կրթական ուսումնական կենտրոնների և բուհերի առկայություն • Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների առկայություն	• Մանկապարտեզ հաճախող երեխաների փոքր թվաքանակ (հանրապետության միջինից կրկնակի փոքր) • Մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ուսանողների փոքր թվաքանակ (հանրապետության 10 000 բնակչի հաշվով ավելի ցածր մակարդակ) • ԲՈՒՀ-ական կրթության շրջանավարտների նվազման միտում • Կրթական համակարգի կողմից առաջարկված մասնագիտությունների և շուկայի պահանջների մեծ տարբերություն • Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներ
8.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ	
• Բուժական հաստատությունների բավարար քանակ • Վերականգնողական կենտրոնի հասանելիությունը հատուկ կարիք ունեցողների համար Գավառ քաղաքում • Մշակութային հաստատությունների բավարար քանակություն և հասանելիություն	• Գյուղական վայրերում բնակարանային ապահովման ցածր մակարդակ (28.2 քմ 1 անձին, հանրապետության միջին 39.8 քմ 1 շնչի հետ համեմատ) • Ծայրահեղ աղքատության և գործազրկության բարձր մակարդակների շարունակական լինելը • Բժշկական մասնագետների թափուր հաստիքների մեծ քանակ
• Պետական աջակցության և դոնորային ծրագրեր հատուկ կարիք ունեցողների և սոցիալապես անապահով ընտանիքների համար	• Տնտեսական լճացումը, որը կարող է ուղղորդել գործազրկության և աղքատության հետագա աճին
9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
• Օդի ցածր աղտոտվածություն մթնոլորտային տեսակարար արտանետումները 1 բնակչի հաշվով՝ փոշի (ՀՀ-ում 42.9 կգ, ՀՀ Գեղարքունիքի մարզում 12.5 կգ և ՀՀ Տավուշի մարզում 19.8 կգ) • Հատուկ պահպանվող տարածքների առկայություն (Սևան ազգային պարկի և արգելոցների առկայություն՝ Լիճք-Արգիջի, Գիլլի, Արտանիշի, Գավառագետի և այլն) ապահովելով կենսաբազմազանության բարձր մակարդակ • Հանրային և բնակելի հատվածում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների	• Տեղայնացված աղտոտվածություն հատկապես գետային համակարգում կապված գյուղատնտեսական գործունեության և լեռնահանքային արդյունաբերության հետ • Կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանների վատ վիճակ, բացակայություն • Օբյեկտներում (շենքեր շինություններ, փողոցային լուսավորություն և այլն) էներգախնայողության և էներգաարդյունավետության ցածր մակարդակ • Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էլեկտրաէներգիայի արտադրության (մասնավորապես՝ արևային և հողմային) ցածր

հնարավորություն. • Վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների մասսայականացմանն ուղղված միջոցառումների իրականացման հնարավորություն.	մակարդակ. • Սևանա լճի մակարդակի բարձրացման դեպքում ենթակառուցվածքների և բուսածածկույթի ջրի տակ անցնելը
• Արևային օրերի մեծ քանակ, քամին և ջուրը վերականգնող էներգիայի արդյունավետության հիմք: • Բարձրորակ քաղցրահամ ջրի մեծ պաշարներ • Վերականգնող էներգիայի արտադրության մեծ ռեսուրսների առկայություն (քամու, հիդրո, արևային) • Բարելաված Կոշտ թափոնների կառավարում «ՀՀ Կոտայք և ՀՀ Գեղարքունիք մարզերում կոշտ թափոնների կառավարման ծրագիր»	• Բնակլիմայական փոփոխությունների ազդեցությունը տարածաշրջանի կենսաբազմազանության և մյուս բնապահպանական բաղադրիչների վրա
10. ՄԱՐԶԱՅԻՆ և ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
• Մարզում իրականցվող գործընթացներին ՀԿ-ների, քաղաքացիական ակտիվ խմբերի միջազգային դոնոր կազմակերպությունների ներգրավվածությունը • Տարածքային կառավարման համակարգում բարձրագույն կրթություն ունեցողների մեծ քանակ • Վարչակազմի վերապատրաստումների պարբերաբար կազմակերպում և անցկացում	• ՏԻՄ–երում բարձրագույն կրթություն ունեցողների ցածր մակարդակ • Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի հասանելիության պակաս • Թերի զարգացած մարդկային, ֆինանսական և տեխնիկական կարողություններ
• Համայնքների խոշորացում • Միջհամայնքային միավորումների ձևավորում	• Համայնքների միգրացիայի բարձր մակարդակ
11. Այլ հարցեր	
	• Հեռավոր և սահմանամերձ համայնքների թերի զարգացվածություն մարզի այլ տարածքների հետ անհամաչափություններ • Ադրբեջանի հետ սահմանի հետ անկայուն վիճակ

V.ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1 ՏԵՍԼԱԿԱՆ

155. ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025թթ. ռազմավարության **տեսլականն է.** *2025թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչությունը և տնտեսությունները կունենան դիվերսիֆիկացված եկամտի աղբյուրներ, կհաղթահարվեն մարզի տարածքների միջև զարգացման անհամաչափությունները կապահովվի մարզի կայուն զարգացումը, մարզի կառավարումը և որոշումների կայացումը կլինի ապակենտրոնացված:*

5.2 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

156. ՀՀ Գեղարքունիքի մարզի ռազմավարական նպատակները 2017-2025թթ. զարգացման ռազմավարության նպատակները և գերակայություններ հիմնականում ուղղված են իրավիճակի և քաղաքականությունների վերլուծության արդյունքում վերհանված հիմնախնդիրների լուծմանն՝ ապահովելով նպատակահեն կառավարման համակարգ: ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության քաղաքականությունը փոխկապակցված է բոլոր մարզերի հետ՝ ներուժերի հիման վրա մրցունակությունը բարձրացնելու և բոլոր մարզերի միջև սոցիալ-տնտեսական համաչափությունը երաշխավորելու նպատակով:

157. Ռազմավարական ուղղությունների տրամաբանությունը ապահովված է՝ համատեղելով ընդհանուր նպատակները (հորիզոնական) և գերակա թեմաները/ոլորտները (ուղղահայաց), և դրանք կապված են ազգային ռազմավարական փաստաթղթերին, ինչպես ներկայացված է ստորև:

Աղյուսակ 22. ՀՀ Գեղարքունիքի մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ.

ՄԶՌ ռազմավարական նպատակներ	**Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2016-2025թթ.**
1. Մրցունակության բարձրացում՝ Մինչև 2025թ. ապահովել մարզի տնտեսական աճ և ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով հասցնել ՀՀ միջին ցուցանիշի նկատմամբ 70%-ի: Ակտիվ կազմակերպությունների թիվը ևս ավելացնել 10%-ով՝ 2015 թվականի համեմատ:	Բոլոր մարզերում մրցունակության բարձրացում՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ *(2025թ.-ի դրությամբ մարզում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ կազմակերպությունների թվաքանակը կաճի առնվազն 10 %-ով ՝ համեմատած 2014թ.-ի հետ)*
2. Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում	Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ

Ապահովել համայնքների համաչափ զարգացում, ռեսուրսների համաչափ տեղաբաշխումով, տնտեսական դիվերսիֆիկացիայի միջոցով: Ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թիվը ավելացնել 10%-ով: Միևնույն ժամանակահատվածում հինգ տարածքների համար գործազրկության և աղքատության մակարդակը նվազեցնել հասցնելով 20-%-ից ցածր, շեշտը դնելով սահմանամերձ և թույլ զարգացած բնակավայրերի վրա (Ճամբարակ և Վարդենիս):	ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա: *(2025թ.-ի դրությամբ մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60%-ը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ից ցածր կգտնվի մարզի բնակչության ոչ ավել, քան 30%-ը)*
3.Տարածքային զարգացման կարողությունների զարգացում Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մինչև 2025 թվականը բարձրացնել մարզային և տեղական դերակատարների ակտիվությունը և մարդկային կապիտալի կառավարման հմտությունները: Մարզային և տեղական մասնագետների մասնագիտական վերապատրաստումները կիրականացում յուրաքանչյուր տարի եղած մասնակիցների թվի 30%-ի չափով:	Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով: *(2017թ.-ին ՀՀ-ն կունենա տարածքային զարգացման քաղաքականության իրականացման մեկ ընդհանուր Տարածքային զարգացման գործառնական ծրագիր (ՏԶԳԾ), որը հիմք կհանդիսանա, ՏԿԶՆբյուջետային ծրագրերի նախապատրաստման և տարածքային զարգացման նպատակներով, արտաքին աղբյուրներից բյուջետային աջակցության ստացման համար)*

1.Գյուղատնտեսության արդիականացում:	**2.**Սևանա լճի էկոհամակարգի պահպանում և տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա:	**3.**Վերականգնվող էներգետիկայի արտադրություն և արդյունավետության բարձրացում:
ՄԶՌ հիմնական գերակայություններ		
Արդյունաբերության և արտահանման խթանում, զբոսաշրջություն և ՏՀՏ ոլորտ, գյուղատնտեսության ու գյուղական տարածքների արդիականացում, սննդի արդյունաբերություն և ՓՄՁ-ների ստեղծում:		
Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2014-2025թթ.		

5.3. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

158. <u>Ռազմավարական նպատակ 1</u>: Մրցունակության բարձրացում

159. Հիմնավորում: 2015թ.-ի դրությամբ մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը կազմել է՝ 64%, որն էլ 6%-ով ցածր է ՀՀ-ի միջին ցուցանիշից: ՀՀ Գեղարքունիքի մարզում 2014թ. զբաղվածների թիվը կազմել է 91.5 հազար մարդ, իսկ 2015թ-ին՝ 76.1 հազար մարդ, տարբերությունը կազմում է 17.4 հազար մարդ, որը բերել է գործազրկության մեծացմանը: Մարզի ակտիվ կազմակերպությունների թվի ավելացում: Նշված հիմնավորումը բխում է ռազմավարության 1-ին նպատակից:

160. <u>Ռազմավարական նպատակ 2</u>: Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում

161. Հիմնավորում: ՀՀ Գեղարքունիքի մարզում պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը 2014թ. կազմել է 5950 մարդ, 2015թ-ին՝ 6601 մարդ, որը ցույց է տալիս մարզում գործազրկության աճ, որն էլ հերթին բերում է սոցիալական խնդիրների առաջացմանը: Մարզում 2016-ի դրությամբ ոչ գյուղատնտեսությամբ ֆորմալ զբաղվածների թիվը կազմել է՝ 55%: Նույն ժամանակահատվածում մարզում աղքատության և ծայրահեղ աղքատության ցուցանիշները եղել են 2014թ. աղքատությունը կազմել է 32.3%, ծայրահեղ աղքատությունը 2.1%, իսկ 2015թ-ին՝ համապատասխանաբար՝ 32.1% և 1.3%: Հատուկ ուշադրություն դարձնել ամենաթույլ զարգացած և սահմանամերձ համայնքների վրա: Նշված հիմնավորումը բխում է ռազմավարության 2-րդ նպատակից:

162. <u>Ռազմավարական նպատակ 3:</u> Տարածքային զարգացման կարողությունների զարգացում

163. *Հիմնավորում:* Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացումը և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավումը չափազանց կարևոր են որոշումների ընդունման, զարգացման, պլանավորման ու կառավարման կարողությունները ապահովման գործում: Վերոնշյալ կարողությունների բարելավումը համահունչ է ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարության 3-րդ նպատակին:

164. Գերակա խնդիր 1: Բարձրարժեք գյուղատնտեսության և գյուղատնտեսական ապրանքների վերամշակում՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ: Զբոսաշրջիկների հոսքի ակնկալվող աճն իր հետ կբերի գյուղատնտեսական մթերքների պահանջարկի աճին, հաշվի առնելով, որ ճիշտ մարկետինգային քաղաքականություն իրականացնելու դեպքում, զբոսաշրջիկները կնախընտրեն տեղական արտադրության «տնական մթերքներ» այլ ոչ թե սուպերմարկետներում վաճառվող փաթեթավորվածը:

165. Հիմնավորում: Գյուղատնտեսության և դրան առնչվող ենթակառուցվածքների արդիականացումը էական նշանակություն ունի ՀՀ Գեղարքունիքի մարզի տնտեսական ակտիվության և աճի համար: Հին տեխնիկայի (շուրջ օգտագործվող տեխնիկայի 70-80%-ը խորհրդային արտադրության են) արդիականացումը կայուն, որակյալ և նոր մեքենա-տրակտորային պարկի, ոռոգման ցանցերի կառուցում և վերանորոգում, ինչպես նաև ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումն էապես կնպաստեն գյուղատնտեսության զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, արտադրանքի արտահանման ծավալի աճին: Գյուղատնտեսության արդիականացման գործում կարևոր տեղ ունի պետական աջակցությունը՝ 2017 թվականին «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» ծրագրի շրջանակներում տրամադրել է 167.1 մլն դրամի սուբսիդացիա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի գարնանացան գարու, ցորենի, առվույտի, կորնգանի, ոլոռի, սիսեռի, ոսպի և

եգիպտացորենի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում 61 մլն դրամի սուբսիդացիա: Մինչև 2025 թվականը գյուղատնտեսության և դրան առնչվող ենթակառուցվածքների արդիականացումը կնպաստի ՀՀ Գեղարքունիքի մարզի տնտեսական ակտիվության աճին: Կիրառելով նոր տեխնոլոգիաներ հողագործության և անասնապահության մեջ կունենանք կայուն զարգացած գյուղատնտեսություն, որը կնպաստի աշխատատեղերի ստեղծմանը, արտադրանքի արտահանման ծավալի աճին:

166. Գերակա խնդիր 2: Սևանա լճի էկոհամակարգի պահպանում և տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա:

167. ***Հիմնավորում:*** Սևան ազգային պարկում իրականացվում են Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման ու պահպանման, բնական պաշարների վերականգման և օգտագործման միջոցառումների համալիր ծրագիր: Սևանա լիճը և դրա ջրհավաք ավազանը համարվում են Հայաստանի բնակչության հանգստի կարևորագույն բազաներից մեկը, որը ունի նաև միջազգային տուրիզմի զարգացման մեծ հեռանկարներ: Ավանդական պատմամշակութային զբոսաշրջային ձևերից բացի, շատ օտարերկրյա զբոսաշրջիկներ նախընտրում են մեր երկիր այցելել ուսումնասիրելու մեր գյուղական համայնքները, վայելելու բնությունը և ծանոթանալու տեղաբնակների ապրելակերպին ու ավանդույթներին, որը կնպաստի գյուղական տուրիզմի զարգացմանը: Մինչև 2025 թվականը Սևանա լճի ավազանի տարածքում կիրականացվի էկոհամակարգի վերականգնման ու պահպանման, բնական պաշարների վերականգման և օգտագործման միջոցառումների համալիր ծրագիր: Քանի որ Սևանա լիճը եւ դրա ջրհավաք ավազանը համարվում են, ինչպես Հայաստանի բնակչության այնպես էլ օտարերկրյա զբոսաշրջիկների համար հանգստի կարևորագույն բազաներից մեկը՝ այնտեղ կկառուցվեն հանգստյան տներ: Նախատեսվում է մինչև 2025 թվականը մարզի զբոսաշրջային ռեսուրս ունեցող համայնքներում զարգացնել գյուղական տուրիզմը հատկապես «Հյուրընկալություն բնակչի տանը» ծրագիրը:

168. Գերակա խնդիր 3: Վերականգնվող էներգետիկայի արտադրություն և արդյունավետության բարձրացում:

169. ***Հիմնավորում:*** Վերականգնվող էներգետիկայի պաշարներով հարուստ է հատկապես ՀՀ Գեղարքունիքի մարզը: Մարզը հարուստ է հիդրո, հողմաէներգետիկ և արևային էներգիայի պոտենցիալներով, որոնց շուրջ արդեն իսկ լուրջ ուսումնասիրություններ են կատարվել: Հիդրոէներգետիկ նպատակներով օգտագործվում են հատկապես Սևանա լճի ավազանի գետերը: Տարածաշրջանում գերակշռում են արևմտյան, հարավ-արևմտյան և հարավային քամիները: Քամու միջին արագությունը տատանվում է 3-5 մ/վրկ սահմաններում: Սևանա լճի ավազանում արևային ճառագայթումը գտնվում է 1700–1800 կվտժ/մ 2 տիրույթում: Մինչդեռ ավազանի որոշ լեռնային տարածքներ ունեն 1900 կվտժ/մ 2 ներուժ: Նշված տվյալները ապացուցում են, որ տարածքը լավագույններից մեկն է արևային էներգիայի տեխնոլոգիաների առումով՝ թե արեգակնային ֆոտովոլտային տեխնոլոգիաների և թե՛ արեգակնային ջրատաքացուցիչների կիրառման տեսանկյունից: Արևային ժամերի միջին թիվը տարածքում տարեկան ավելի քան 2600 ժամ/տարի է: Հաշվի առնելով արևային օրերի մեծ քանակը և ջրային պաշարների առատությունը (լեռնային գետեր) մարզում նախատեսվում է մինչև 2025 թվականը զարգացնել վերականգնվող էներգետիկայի արտադրություն: Նշված ռեսուրսները բարենպաստ միջավայր կստեղծեն ներդրումների համար, արևային,փոքր հիդրոէլեկտրակայանների, հողմակայանների կառուցման համար: Վերականգնվող էներգետիկայի արտադրությունը կնպաստի գյուղական համայնքների կենսամակարդակի բարձրացմանը, մշակող և վերամշակող արտադրությունների զարգացմանը մարզի տարածքներում:

VI.ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 23. ՀՀ Գեղարքունիքի մարզի գերակայություններ

Թեմա	Գերակայություն	հիմնական շահառուներ	Կապը՝ պետական ռազմավարություններին և խոշոր ծրագրերին
Բնական պայմաններ	**1.**Սևանա լճի և այլ ջրային պաշարների կայուն օգտագործում **2.** Սևանա լճի էկոհամակարգի պահպանում **3.** **(հիմնական գերակայություն)**	ՀՀ բնակչություն, կլիմա	Զբոսաշրջության զարգացման պետական ծրագիր, «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-11-Ն օրենք, «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-276 օրենք
Ժողովրդագրական իրավիճակ			
Քաղաքային զարգացում	**3.**Քաղաքային ցանցի զարգացում, բարելավելով ենթակառուցվածքները և ինտենսիվ դարձնել տնտեսության գործունեությունը	Քաղաքային բնակչություն	Քաղաքների 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրեր
Տրանսպորտ, հաղորդակցում և տեղեկատվական հասարակություն	**4.**Արցախի հետ կապի բարելավում	Մարզի բնակչություն	«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 05-ի ՀՕ-233-Ն օրենք
Հանրային ենթակառուցվածքներ	**5.**Ճանապարհների պայմանների բարելավում	Մարզի բնակչություն Մարզ այցելած զբոսաշրջիկներ	4.«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-11-Ն օրենք ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում 5.«Ավտոմոբիլային ճանապարհների մասին»

			Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 05-ի ՀՕ-240-Ն օրենք
Ներքին արտադրանք և եկամուտներ			
Զբաղվածություն	**6.** Երկարաժամկետ գործազրկության նվազեցում և երիտասարդության զբաղվածության խթանում **7.** Ինքնազբաղվածությանը և ՓՄՁ-ներ ստեղծելու խթանում (ոչ գյուղատնտեսական ֆորմալ աշխատատեղերի ստեղծման խթանում)	Մարզի բնակչություն	Գործազրկությունը նվազեցնող պետական աջակցության ծրագրեր Մարզի համայնքների կողմից ներկայացված ներդրումային ծրագրեր
Մարզային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ	8.Գյուղատնտեսության արդիականացումը **(հիմնական գերակայություն)** 9. Տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա **(հիմնական գերակայություն):**	Մարզի բնակչություն	«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-190-Ն օրենք «Արտադրող խմբերի և արժեշղթաների զարգացում» ծրագիր (ՕԳԱՆ) ծրագրի շրջանակներում եվրոմիության կողմից ֆինանսավորվող օրգանական գյուղատնտեսության աջակցող նախաձեռնության ծրագիր «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-465-Ն օրենք, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-261-Ն օրենք, «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասի» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-11-Ն օրենք
Կրթություն, մարդկային կապիտալ	**10.**Մարզի աշխատաշուկայի կարիքները բավարարող երիտասարդ մասնագետների պատրաստում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՏՏ և զբոսաշրջության ոլորտների վրա **11.** Համընդհանուր	ՀՀ Գեղարքունիքի մարզի գործատուներ	«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենք, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության

	հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովում, որը հնարավորություն է ընձեռում անձին՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության, **12.** 3-5 տարեկան բոլոր երեխաների համար հավասար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիության, ինչպես նաև 5 տարեկանների առավել ընդգրկվածության ապահովում, **13.** Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ուսանողների արտադրական պրակտիկան մարզում կազմակերպելու, գործատու և ուսումնական հաստատություն կապը զարգացնելու, ինչպես նաև շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու նպատակով:		2009 թվականի հուլիսի 23-ի ՀՕ-160-Ն օրենք, SS ոլորտի զարգացման համալիր ծրագրեր «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 08-ի ՀՕ-164-Ն օրենք,
Սոցիալական ներառում	**14.** Բարելավել բնակֆոնդի պայմանները **15.**Ծայրահեղ աղքատության և աղքատության կրճատում	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում
Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավետություն, կլիմայի փոփոխության հարմարվողականություն	16.Վերականգնողական էներգետիկայի արտադրություն և արդյունավետության բարձրացում **(հիմնական գերակայություն)**	Մարզի բնակչություն	«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 09-ի ՀՕ-122-Ն օրենք, ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի նիստի 37-րդ կետով հավանության արժանացած «Արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին» N 53 արձանագրային որոշում,

			«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-276 օրենք, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի նիստի 11-րդ կետով հավանության արժանացած ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում» N41 արձանագրային որոշում՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում»
Մարզային և տեղական զարգացման կարողություններ	**17.** Համայնքների խոշորացում և միջհամայնքային միավորումների կարողությունների զարգացում	Մարզային և համայնքային աշխատակազմեր	«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենք, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 04-ի ՀՕ-272 օրենք, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-43-Ն օրենք, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 07-ի ՀՕ-337 օրենք, ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի նիստի 18-րդ կետով հավանության արժանացած «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգին հավանություն

			տալու մասին» թիվ 44 արձանագրային որոշում
Այլ հարցեր	**18.**Սահմանամերձ և հեռավոր համայնքների պաշտպանվածության և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում	Մարզի բնակիչներ	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում

VII.ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

170. ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025թթ. ռազմավարական ծրագրերը, որոնք շարունակական են և ակնկալվող, գնահատվում են ըստ հետևյալ չափանիշների՝ ռազմավարական կողմնորոշում մարզային զարգացման ռազմավարական նպատակների և գերակայությունների հետ, արժեք/օգուտ հարաբերակցություն, ծրագրի իրագործելիություն: Ծրագրի գնահատման ցանկը ներկայացված է ստորև:

Աղյուսակ 24. Ռազմավարական ծրագրեր

No.	Ծրագրի անուն/թեմա	Կարճ նկարագիր	Արժեք	Իրականացնող մարմին	ժամանակահատված	Համապատասխան գերակայություն
1.	Սևանա լճի էկոհամակարգի վերականգնում, պահպանում և օգտագործում	Սևանա լճի մակարդակի, ջրի որակի բարելավում, կենդանական և բուսական աշխարհի վերականգնում և պահպանում	172.2 մլրդ դրամ	ՀՀ պետական բյուջե Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2002-2030թթ..	Սևանա լճի էկոհամակարգի պահպանում և տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա:
2.	Սևանի իշխանի պաշարների վերականգնում	Սևանի էնդեմիկ ձկնատեսակների վերականգնում, Սևանի իշխանի մայրական կազմի ստեղծում, ձկան վերամշակման գործարանի հիմնում: Արդյունքում կստեղծվի 5000 աշխատատեղ:	9.1 մլրդ դրամ 50.9 մլրդ դրամ	ՀՀ պետական բյուջե Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2014-2024թթ.	Սևանա լճի էկոհամակարգի պահպանում և տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա:
	Սևանա լճի ձկնատեսակների գույքագրում, հաշվառում օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում և պահպանության միջոցառումների իրա-կանացում:	«Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում:» ՄԺԾ Ծ շրջանակներում իրականացվող ծրագրի համար	Յուրաքանչյուր տարի 7.526 մլն դրամ	ՀՀ պետական բյուջե	2017-2019թթ.	Սևանա լճի էկոհամակարգի պահպանում
3.	«Տեղական համայնքների կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության օգուտները ցուցաբերելու նպատակով անտառների և արոտավայրերի կայուն կառավարում»	Կլիմայի կարգավորում, անտառների և արոտավայրերի վերականգնում	576.2 մլն դրամ	ԵՄ (համաձայնությամբ), ՄԱԶԾ-ի երևանյան գրասենյակ (համաձայնությամբ)	2013-2017թթ.	Սևանա լճի էկոհամակարգի պահպանում և տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա:
4.	«Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի «Համայնքի արոտավայրերի և	Արոտավայրերի ճիշտ կառավարում և անասնապահության զարգացում	192.7 մլն դրամ	Համաշխարհային բանկի վարկային ծրագիր (համաձայնությամբ)	2016թ.	Գյուղատնտեսության արդիականացում:

	անասնապահության կառավարման համակարգ-2»					
5.	Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի գարնանացան գարու, ցորենի, առվույտի, կորնգանի, ոլոռի, սիսեռի, ոսպի և եգիպտացորենի արտադրության զարգացման ծրագիրը	Մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի սորտաթարմացման ապահովում	61.0 մլն. դրամ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017թ.	Գյուղատնտեսության արդիականացում:
6.	Հայաստանի Հանրապետության հողօգտագործողների ն 2017 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիր:	Մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրում	167.1 մլն. դրամ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017թ.	Գյուղատնտեսության արդիականացում:
7.	Սևան քաղաքի կեղտաջրերի մաքրման կոլեկտորի կառուցում	Սևան քաղաքի կեղտաջրերի հավաքում և մաքրում	3.87 մլն եվրո	Եվրոպական ներդրումային բանկ (համաձայնությամբ)	2019թ.	Սևանա լճի էկոհամակարգի պահպանում և տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա:
8.	«ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ թափոնների կառավարման ծրագիր»	Մարզերի աղբավայրերի կառավարում և շահագործում	11 մլն Եվրո	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկ (ՎԶԵԲ) (համաձայնությամբ)	2018-2024թթ.	Սևանա լճի էկոհամակարգի պահպանում և տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա:
9.	Մարտունի-Վաղաշեն-Վարդենիկ մարզային նշանակության ճանապարհի հիմնանորոգում կմ0+00-կմ10+500	իրականացվում է մայթերի, ջրահեռացման ցանցի կառուցման և համատարած ասֆալտապատման աշխատանքներ	898 մլն դրամ	Համաշխարհային բանկ (համաձայնությամբ)	2017թ.	Սևանա լճի էկոհամակարգի պահպանում և տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա:
10.	Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման միջպետական նշանակության ճանապարհի հիմնանորոգում կմ6+500-կմ10+834	իրականացվում է մայթերի, ջրահեռացման ցանցի կառուցման և համատարած ասֆալտապատման աշխատանքներ	143.6 մլն դրամ	Համաշխարհային բանկ (համաձայնությամբ)	2017թ.	Սևանա լճի էկոհամակարգի պահպանում և տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա:
11.	Զոլաքարի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	շենքի ամբողջական հիմնանորոգում	493.28 մլն դրամ	ՀՀ պետական բյուջե	2016-2018թթ.	Տարածքային զարգացման կարողությունների զարգացում
12.	Սևան համայնքի մշակույթի տան հիմնանորոգում	շենքի ամբողջական հիմնանորոգում	418.375 մլն դրամ	ՀՀ պետական բյուջե	2016-2019թթ	Սևանա լճի էկոհամակարգի պահպանում և տուրիզմի զարգացում՝ շեշտը

						դնելով գյուղական
13.3.	«Արևային ֆոտովոլտային կայանների կառուցում»	Նախատեսվում է կարճաժամկետ և երկարաժամկետ ստեղծել շուրջ 200 աշխատատեղ: Ակնկալվում է, որ արևային ՖՎ ծրագիրը կստեղծի սոցիալական և բնապահպանական օգուտներ	60.2 մլն ԱՄՆ դոլար	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (ՀՎԷԷՀ) ներդրումային ծրագիր և Համաշխարհային բանկ «Արիես ինժեներիա» իսպանական խորհրդատվական ծառայություն (համաձայնությամբ)	2017-2042թթ.	Վերականգնվող էներգետիկայի արտադրություն և արդյունավետություն

171. ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի ափամերձ տարածքների տնտեսական զարգացման ուղղությունները ներկայացված են Հավելվածով:

172. Վերը նշված աղյուսակում նշված ծրագրերի համար անհրաժեշտ ֆինանսավորման ռեսուրսները և դրանց աղբյուրները կգնահատվեն 2018-2020թթ. առաջիկա տարածքային զարգացման գործառնական ծրագրի ներքո:

VIII. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ

173. ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության համակարգումը և իրականացումը կատարվելու է մարզպետարանի աշխատակազմի կողմից՝ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության վերահսկողության ներքո՝ այլ նախարարությունների և պետական գերատեսչությունների հետ համագործակցելով:

174. ՀՀ Գեղարքունիքի մարզի ԶՌ-ն մշակման ընթացքում աջակցություն է ստացել մի շարք կառույցների կողմից.

1) Մարզային ենթակայության կառույցներ կողմից, հիմնականում՝

ա. ԶՌ ամբողջական իրականացման համակարգման միջոցով,

բ. Մարզի ԶՌ նախապատրաստման միջոցով մշակում, վերանայում և փոփոխություն ըստ պահանջի,

գ. ԶՌ իրականացմանն առնչվող գործողությունների համակարգման միջոցով

դ. ԶՌ իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների պատրաստման միջոցով,

ե. Տեղեկատվության է տրամադրվել բոլոր շահագրգիռ կողմերին ԶՌ իրականացման և մարզային զարգացմանն առնչվող այլ խնդիրների վերաբերյալ:

զ. Մարզի զարգացման հնարավորությունների խրախուսման միջոցով:

2) Տեղական ինքնակառավարման մարմիններին զարգացման ռազմավարությունների և ծրագրերի, ինչպես նաև ծրագրերի առաջարկների մշակման վերաբերյալ մասնագիտական և տեխնիկական աջակցության է ցուցաբերվել:

ա. Աջակցության է ցուցաբերվել տեղական ինքնակառավարման մարմինների զարգացման ծրագրերի պլանավորման մշակման գործընթացում,

բ. Ենթակառուցվածքային և ոչ ենթակառուցվածքային ծրագրերի զարգացման և իրականացման համար ներդրումային ծրագրերի միջոցով:

3) Աջակցության է ցուցաբերվել հասարակական կազմակերպություններին և այլ շահագրգիռ կողմերին տարածքային և տեղական զարգացմանն առնչվող ծրագրերի նախապատրաստման համար:

ա. Հասարակական կազմակերպությունների կողմից, հիմնականում ԶՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, տարածքային և տեղական ծրագրերի առաջարկման և իրականացման, կենսամակարդակի բարելավմանն և աղքատության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցառումների առաջարկման և այլնի միջոցով:

բ. Իրականացվել են գործառույթներ տարածքային կառավարման և սոցիալ-տնտեսական զարգացման գործում,

գ. Կազմվել են ենթակառուցվածքային և ոչ ենթակառուցվածքային ծրագրերի զարգացման և իրականացման համար ներդրումային ծրագրեր,

4) Համագործակցել ենք տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ տարածքային զարգացման ամբողջական քաղաքականության մշակման գործընթացում:

ա. Տարածքային զարգացման խթանման համար միջոցառումների իրականացում

բ. Տարածքային զարգացման համար կազմակերպում և համակարգում է ազգային ռազմավարական պլանավորման փաստաթղթերը,

գ. ՏԶ պլանավորման փաստաթղթերի համար ապահովում է համապատասխան մեթոդաբանություն,

դ. Պատրաստում և ՀՀ կառավարությանն է ներկայացնում տարածային զարգացման ռազմավարական և գործառնական փաստաթղթերի իրականացման վերաբերյալ զեկույցները,

ե. Կազմակերպում և համակարգում է ԶՌ-ները մոնիտորինգի և գնահատման համար անհրաժեշտ գործողությունները:

5) Դոնորների և միջազգային ֆինանսական կառույցների կողմից, հիմնականում ԶՌ իրականացման գործընթացին ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրելու միջոցով:

ա. Մասնավոր հատվածի դերակատարների կողմից, հիմնականում ԶՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, իրենց սեփական ներդրումային և ընդլայնման ծրագրերի պլանավորման և իրականացման միջոցով, ինչպես նաև մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների առաջարկման, և տարածաշրջանների նորարարական կարողությունների բարձրացման և օգտագործման միջոցով:

բ. Վերոնշյալ շահագրգիռ կողմերից որոշները ուղղակի գործառույթներ կիրականացնեն ԶՌ առնչությամբ, որոշների դերը կլինի անուղղակի, այն է՝ հիմնականում կկատարեն իրենց սեփական առաջադրանքները մարզերում: ԶՌ հաջողության բանալին լինելու է այս բոլոր դերակատարների միջև ամուր համագործակցության և լավ հաղորդակցության ապահովումը:

գ. ԶՌ արդյունքները կանոնադրության առումով նվազագույն են, և հիմնականում առնչվում են որոշակի փոքր ծառայությունների գնմանը (օրինակ՝ գնահատում), ինչպես նաև ներքին մոնիտորինգին, հաշվետվությանը և գնահատմանը, որոնք կարող են իրականացվել մարզային և ազգային վարչակազմերի միջոցով:

IX.ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

175. Զարգացման ռազմավարության իրականացումը մոնիտորինգի կենթարկվի, կվերանայվի և կգնահատվի համաձայն հետևյալ սկզբունքների՝

ա) Պարբերական մոնիտորինգ և առաջընթացի գնահատում՝ տարածքային զարգացման ռազմավարության նպատակներին և գերակայություններին հասնելու ուղղությամբ:

բ) ՄԶՌ-ն մոնիտորինգի կենթարկվի ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ նպատակներին հասնելու առումով:

176. Ստորև թվարկված կատարողական ցուցիչները չափում են ՄԶՌ նպատակներին հասնելը:

1) Մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը հասցնել 70%-ի հանրապետական միջինի նկատմամբ,
2) Թույլ զարգացած համայնքներում ՓՄՁ-ների աճ՝ 10%-ով,
3) Մարզում արևային էներգախնայող համակարգերի ներդրում ֆոտովոլտային 3 կայաններ,
4) Մասնագիտական և միջնակարգ կրթությամբ մարդկանց թիվը ավելացնել 10 տոկոսային նիշով,
5) Ոչ ֆորմալ գյուղատնտեսական զբաղվածների թվի ավելացում 10%-ով,
6) Ակտիվ կազմակերպությունների թվի աճ՝ 10%-ով,
7) Լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ տարածքների երկարաժամկետ գործազրկության և աղքատության տեմպերը հասցնելով 20%-ից ցածր
8) Մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում՝ սուբյեկտների թվի 30%-ի չափով՝ յուրաքանչյուր տարի:

177. Այս ցուցիչները տարեկան կհաղորդվեն և կգնահատվեն ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կողմից և արդյունքները կներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՄԶՌ առաջընթացի զեկույցում:

178. Ռիսկեր, ռիսկերի մոնիտորինգ և նվազեցում: Հետևյալ ռիսկերն են հայտնաբերվել ՄԶՌ-ի համար, որոնք արդեն իսկ ինտեգրված են փաստաթղթում, և/կամ կկիրառվեն ՄԶՌ գործընթացի իրականացման ժամանակ:

Աղյուսակ 25. ՀՀ Գեղարքունիքի ՄԶՌ հիմնական ռիսկերը և նվազեցման ուղիները

Ռիսկեր	Ռիսկերի նվազեցման ուղիները
Համապատասխան մարդկային ռեսուրսների բացակայություն: Փորձառու և որակյալ աշխատակիցների բացակայություն՝ հատկապես համայնքային մակարդակով, որպես պոտենցիալ ռիսկեր,տեղական մակարդակում հաջող իրականացման համար: Տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ չունեն ռեսուրսներ և ունակություն վերցնելու նախաձեռնությունը ծրագրի, որը հետաքրքրություն ունի շահագրգիռ կողմերի և այլ տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտներում: Մարզային վարչակազմերի	Ընթացիկ վերապատրաստում և կարողությունների բարելավման պլանավորում՝ կոորդինացման և մարզպետարանի հմտությունների բարելավման համար, ինչպես նաև իրականացման հմտություններ՝ տարածքային և տեղական մակարդակներում:

համակարգման ոչ բավարար կարողությունները կարող են լրացուցիչ խոչընդոտ հանդիսանալ գործընթացի համար:	
Առանցքային հարցերի ընկալման բացակայություն՝ մարզային ադմինիստրացիաների և այլ շահագրգիռ կողմերի միջև:	Դասընթաց մարզային վարչակազմի և ՏՋ շահագրգիռ կողմերի համար, որպեսզի ստեղծվի բանիմաց համայնք՝ ռացիոնալ որոշում կայացնելու համար:
ՄՋՌ կարգավիճակի պարզաբանման բացակայություն և/ կամ տարբեր իրականացման ընթացակարգեր, և պարտականություններ:	Իրագործելի ծրագրի մշակում, որը ենթակա է քաղաքական բանավեճի: Մոնիտորինգի և հաշվետվությունների համակարգերի մշակում՝ ՄՋՌ արդյունքների հրապարակման համար:
Անբավարար մոտիվացիան շահագրգիռ կողմերի ներգրավված լինելու: Որոշ դեպքերում որոշ շահագրգիռ կողմեր կարող են բողոքել, որ ծրագրի իրականացման ժամանակացույցը ենթակա չէ քաղաքական բանավեճի, կամ թափանցիկության պակաս կա ողջ գործընթացում:	Ներգրավելով շահագրգիռ կողմերին ՄՋՌ մշակման ամենավաղ փուլում և ամբողջ իրականացման փուլում:
Անարդյունավետ մոնիտորինգ՝ հստակ սահմանված կատարողական ցուցիչների բացակայության պատճառով:	Հստակ սահմանված և չափելի կատարողական ցուցիչներ:
Տարբեր շահագրգիռ խմբերի շահերի խթանում :	Ընդհանուր շահերի նույնականացում, շահագրգիռ կողմերին խրախուսում:
ՄՋՌ-ների դերի կարևորության ընկալումը հասարակության կողմից և ինչպես կարելի է այն կապվել իրենց առօրյա կյանքին:	Հանրային իրազեկության բարձրացում՝ դարձնելով ՄՋՌ-ն հայտնի փաստաթուղթ ընդհանուր հասարակության շրջանում, և հրապարակել հաջող տարածքային և տեղական ծրագրեր: Հրապարակայնությունը կոնկրետ ծրագրերի և նախաձեռնությունների կապված ՄՋՌ-ին կբարձրացնի իրազեկությունը և կխթանի դրական իմիջ:
ՄՋՌ-ն պետք է կարողանալ մատուցել, թե մարզային, և, թե տեղական մակարդակով: Հաջող ՄՋՌ-ն ապահովում է ճանապարհային քարտեզ մարզի հետագա զարգացման համար, ինչպես նաև ամբողջ վայրերի / համայնքների համար:	Կառուցել բավարար ճկունություն իրականացման մեջ և թույլ տալ, որ ավելի ցածր մակարդակներում ընդունեն այնպիսի մոտեցում, որը համապատասխանում է իրենց տեղական կարիքներին:

179. ՄՋՌ-ի վերանայում: ՄՋՌ-ի մեծ միջնաժամկետ վերանայումը տեղի կունենա 2021թ. (2017-2020թթ համար), և եթե պայմանները պահանջում են ռազմավարությունը կթարմացվի, կճշգրտվի և կերկարաձգվի:

180. ՄՋՌ գնահատում: 2026-ին ՄՋՌ-ն կանցնի նախնական գնահատում: Եթե միջոցները հասանելի լինեն՝ կանցնի միջնաժամկետ գնահատում 2021թ. կլինի նաև ՄՋՌ վերանայում: Գնահատումը կընդգրկի առնվազն հետևյալ չափորոշիչները՝

1) Արդյունավետություն՝ վերլուծության համարվում է, թե որքա՞ն հաջող է ՄՋՌ-ին հասել իր նպատակներին: Այն կարելի է գնահատել ըստ հետևյալ հարցերի՝

ա) Որքանո՞վ են նպատակները իրականացել,

բ) Որո՞նք են եղել (քանակական և որակական) ազդեցությունները,

գ) Որքանո՞վ է նկատված ազդեցությունները համապատասխանում նպատակներին,

դ) Որքանո՞վ կարող են այդ փոփոխությունները/ ազդեցությունները ներառվել ՄԶՌ-ում,

ե) Ի՞նչ գործոններ են ազդել նկատված ձեռքբերումների վրա,

զ) Որքանո՞վ են տարբեր գործոններ ազդել նկատված ձեռքբերումների վրա:

2) Արդյունավորություն՝ է համարվում օգտագործվող ռեսուրսների և փոփոխությունների առաջացած հարաբերությունը: Բնորոշ հարցեր՝

ա) Որքանո՞վ են ծախսերը արդարացված, փոփոխությունները/հետևանքները որոնք ձեռք են բերվել,

բ) Որքանո՞վ են ծախսերը համաչափ առավելությունների հասել,

գ) Ի՞նչ գործոններ են ազդում որևէ կոնկրետ անհամապատասխանությունների վրա,

դ) Որքանո՞վ է ՄԶՌ-ն եղել արդյունավետ ծախսերի առումով, կան արդյո՞ք էական տարբերություններ ծախսերի (կամ օգուտների) մարզերի միջև:

ե) Ո՞րն է պատճառը:

3) Համընթացություն՝ համընթացության գնահատումը ցույց է տալիս, թե որքան լավ են տարբեր գործողություններ միասին աշխատում: Կարող են օգտագործվել հետևյալ հարցերը՝

ա) Որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ մարզի այլ ռազմավարական նպատակներին,

բ) Որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ ներքին առումով,

գ) Որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ Հայաստանի զարգացման քաղաքականության հետ:

4) Համապատասխանություն՝ համապատասխանությունը ցույց է տալիս հասարակության կարիքների և խնդիրների միջև եղած հարաբերությունը: Կարելի է գնահատել հետևյալ հարցերով՝

ա) Որքանո՞վ է ՄԶՌ-ն դեռ համապատասխան,

բ) Որքանո՞վ են նպատակները համապատասխան ՄԶՌ-ին,

գ) Որքանո՞վ են նպատակները (դեռ) համապատասխանում մարզի կարիքներին,

դ) Որքա՞ն կարևոր է ՄԶՌ-ն մարզի բնակիչների համար:

X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

181. Ֆինանսական ռեսուրսներ: ՄԶՌ-ով նախատեսվող ռազմավարական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ պետական և մարզի համայնքների բյուջեների (այդ թվում՝ ապագա տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմի շրջանակներում, որը կստեղծվի 2017թ. և կիրականացվի սկսած 2018թ.), դոնորների և միջազգային ֆինանսական հաստատությունների, ոչ հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ֆինանսավորման միջոցները: ՄԶՌ-ի համար անհրաժեշտ ֆինանսավորման ռեսուրսները և դրանց աղբյուրները կգնահատվեն 2018-2020թթ. առաջիկա տարածքային զարգացման գործառնական ծրագրի ներքո:

182. Մարդկային ռեսուրսներ: ՄԶՌ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է կառուցել ժամանակակից և արդյունավետ հանրային կառավարում, կամ ինստիտուտների համակարգ, որը միասին կտանի կայուն մարզային զարգացման: Մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության և հանրային կառավարման միջև բարելավված համակարգումը, ոլորտների միջև համակարգումը և խորհրդատվությունը նախապայման է կայուն զարգացման համար:

183. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմն ունի՝ 177 աշխատակիցներ՝ որից 151 ունեն բարձրագույն կրթություն (85.3%):

184. Տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն՝ 493 համայնքային ծառայության աշխատակիցներ՝ որից 270 ունեն բարձրագույն կրթություն (54.7%):

185. Տեխնիկական և կազմակերպչական հարցեր: ՄԶՌ իրականացումը չի պահանջում մեծ տեխնիկական փոփոխություններ կամ ներդրումներ, ինչպես նաև մեծ կազմակերպչական ադապտացիա: ՄԶՌ-ն կարող է իրականացվել առկա ինստիտուցիոնալ և տեխնիկական հագեցվածությամբ:

186. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԶՌ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1) 2016 թվականի հոկտեմբերի 26-28-ը ՀՀ Արագածոտնի մարզում կայացավ ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության մշակման դասընթացի առաջին փուլը: ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանից մասնակցում էր չորս հոգուց բաղկացած աշխատանքային խումբը: Եռօրյա ժամկետում եվրոպացի փորձագետների խորհրդատվությամբ կատարվեց իրավիճակի վերլուծություն: Որոշակի ժամանակահատվածի համար կատարելով վերլուծություններ՝ տարբեր ոլորտներում մենք ունեցանք մարզը բնութագրող մի փաստաթուղթ: Դասընթացի ավարտից հետո տեղի ունեցավ մարզային հանդիպում եվրոպացի մասնագետների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց իրավիճակի վերլուծության մասին կատարված աշխատանքները: Քննարկման ընթացում եվրոպացի մասնագետները հստակեցրին մեր կողմից կատարված աշխատանքները և պատասխանեցին մի շարք հարցերի:

2) 2016 թվականի դեկտեմբերի 7-9-ը ՀՀ Կոտայքի մարզում կայացավ ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության մշակման դասընթացի երկրորդ փուլը: Նախքան երկրորդ փուլի դասընթացին անցնելը ամփոփվեց առաջին փուլի կատարած աշխատանքները: Այս փուլում եվրոպացի փորձագետների օգնությամբ կատարվեց ՈՒԹՀՍ (ուժեղ, թույլ, հնարավորություն, սպառնալիք, ՍՎՈՏ) վերլուծություն: Իրականացնելով նշված վերլուծությունը վեր են հանվում մարզի ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները: Ստացված արդյունքները արդեն իսկ ցույց են տալիս թե՛ զարգացող, և թե՛ խնդիրներ ունեցող ոլորտները: Դասընթացի ավարտից հետո տեղի ունեցավ մարզային հանդիպում եվրոպացի մասնագետների հետ: Հանդիպմանը մասնակցում էին մի շարք պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, ՀԿ-ների անդամներ և այլ շահագրգիռ կողմեր: Հանդիպման ընթացքում քննարկվեց ՈՒԹՀՍ (ուժեղ, թույլ, հնարավորություն, սպառնալիք) վերլուծության մասին կատարված աշխատանքները:

3) 2017 թվականի հունվարի 17-20-ը ՀՀ Վայոց ձորի մարզում կայացավ ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության մշակման դասընթացի երրորդ փուլը: Նախքան երրորդ փուլի դասընթացին անցնելը ամփոփվեց երկրորդ փուլի կատարած աշխատանքները: Այս փուլում եվրոպացի փորձագետների օգնությամբ վեր հանվեց 2017-ից մինչև 2025 թվականը մարզի տեսլականը, նպատակները և գերակայությունները: Ունենալով հստակ նպատակներ և ընդգծված գերակայություններ մարզը մինչև 2025 թվականը կունենա զարգացած տնտեսություն: